3601

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

1912

CONSTANTINOPLE

ՄԵՂՐԱԳԵՏ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

ԼՈՒՍԱԴՂԲԻՒՐ
Հրատարակչական Ընկերութիւն
Թիւ 1

Կ. ՊՈԼԻՍ Տպարան «Արամ» 1912

491.99-8
Զ-36

20002

2010

491.542-8
2-36
«ԼՈՒՍԱՂԲԻՒՐ»
ՀՐԱՏԱՐԿՉԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՕՆՆԻԿ - ԺԻՐԱՅՐ
Կ. Պոլիս
SOCIÉTÉ D'ÉDITEURS
"LOUSAGHPUR"
ONNIK - JIRAYR
CONSTANTINOPLE

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՄԵՂՐԱԳԵՏ

1002
9039

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ. — Ա. ՏԱՐԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԼՈՒՍԱՂԲԻՒՐ
Հրատարակչական Ընկերութիւն
Թիւ 1

Կ. ՊՈԼԻՍ Տպարան «Արաքս» 1912

11612

(11803)

54287-ит

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

41022-68

Լուսաղբիւր Հրատարակչականը հիմնելու ձեռնարկին մէջ մեզ ոգեւորող միակ նպատակն է եղած՝ — ուժ տալ դպրոցական լաւագոյն դասագիրքերու հրատարակութեան՝ իբր գրագէտ եւ մանկավարժ ծանօթ եւ կարող անձերու գործերուն լոյս ընծայումովը:

Այս նպատակին հետապնդումով կը յուսանք ծառայած ըլլալ բարձրացմանը որակին մեր մանկավարժական-դպրոցական դասագրքերուն, որոնց պէտքը ա՛յնքան զգալի եւ նշանակութիւնը այնքան մեծ է մեր մատաղ սերունդի դաստիարակութեան համար:

Կ, Պոլիս, 1912 — ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ



Աշնան արեւ

ԱՄԱՌԸ ԳՆԱՑ

Ամառը գնաց, եկաւ աշունը։

Կալերը կամնուեցան, յարդը յարդանոցին և ցորենը ամբարին մէջ զետեղուեցաւ. Ջաղացքները կը դառնան հա կը դառնան, ու ալիւր կաղան։

Նախիրները կը թափառին հնձուած արտերուն մէջ ու կը կրծեն խոզանը։

Այգիներուն խաղողները վաղուց հասունցեր են. ողկոյզները, սև, կարմիր ու ճերմակ, կերևնան կանաչ տերևներուն ետևէն ու կը սպասեն այգեկութին։ Քիչ մնաց ահա այգեկութն ալ կուգայ, կը կթենք խաղողները և այգիներն ալ կը դառնան խոպան՝ արտերուն պէս։

Օրերը կամաց կամաց կը կարճնան և գիշերները կերկննան։ Արևը ալ տաք չէ ամառուան պէս. երկինքին երեսը կը սկսին ամպերը թափառիլ կարաւան կարաւան։ Տերևները կը թափին ծառերէն ու թուփերէն. հովը կը քշէ զանոնք ու կըսէ.

— «Անցաւ Ամառը, եկաւ Աշունը, շուտով պիտի գայ նաև Ձմեռ...»

Ով որ ամառն աշխատեր է, ով որ ծոյլ ու անհոգ չէ եղեր, չի վախնար ոչ աշունէն, ոչ ձմեռէն։ Երկրագործը քրտինք թափեր ու հունձք

է քաղեր. պարտիզպանը դատեր բաներ և պտուղ է հասցուցեր. բոլոր աշխատողները, քաղաքացի թէ գիւղացի, հիմա տարուան պարէնը կը պատրաստեն։



Ամառը գնաց, եկաւ աշուն։

Պիտի գայ ձըմեռն ալ. բայց եթէ պիտի գայ, թող շուտ գայ, որպէսզի շուտ երթայ ու հասնի գարունը։

Ա՜խ, գարո՛ւն, գարո՛ւն, մեռնի՜մ արեւիդ, մեռնի՜մ կանաչիդ։

ԿԱԼ — Հնձուած ցորեն որ պիտի կամնուի
ԿԱՄՆԵԼ — Ցորենը յարդէն զատել
ԽՈՉԱՆ — Հնձուած արտի մէջ մնացած ցորենի արմատ
ԽՈՊԱՆ — Ամայի
ԴԱՏԵՐ ԲԱՆԵՐ Է — Աշխատեր է
ՊԱՐԷՆ — Ձմեռուայ ուտելիք

1. *Սեպտեմբեր քանի՞ն է որ գիշեր ու ցերեկ հաւասար կ'ըլլան։*
2. *Գարնան մէջ ե՞րբ է որ անգամ մըն ալ նոյն բանը կը պատահի։*
3. *Ա՛լ ի՞նչ բաներ կը պատահին աշնան մէջ։*



ԿԱՐԻ ԿՈՂՈՎԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Օր մը մայրիկիս կարի կողովին մէջ իրարու հետ կը վիճէին մկրատը, ասեղը և դերձանը։

Դերձանը կըսէր մկրատին.

— Ի՜նչքան ծանր ես, մկրա՛տ եղբայր. քու բեռիդ տակ կը ոքացնես զիս։ Աս ալ հերիք չէ դեռ, քիչ մը որ բարկանաս՝ սուր ակռայիդ տակ կառնես զիս ու կը ծամես։ Ո՛չ, դուն չար ես։

Յանկարծ ասեղը վեր թռաւ իր տեղէն և բարակ ձայնովը պոռաց.

— Իրաւունք ունի իմ դերձան քուրիկս. դուն չար ես, դուն անգութ ես, մկրա՛տ բարեկամ։ Մենք կը շինենք, դուն կը կտրես. մենք կը կարենք, դուն կը քակես...

Մատնոցն ալ խօսքի խառնուեցաւ և վէճը շատ պիտի սաստկանար, բայց մայրիկս վրայ գալով՝ լսաւ անոնց.

— Չէ, զաւակներս, պարապ տեղը կը վիճիք և պարապ տեղը զիրար չէք հասկնար։ Դուք բոլորդ ալ բարի էք, որովհետև օգտակար աշխատանք կը կատարէք։ Թելը առեղին եռևէն կերթայ, մատնոցը առեղին կօգնէ և մկրատն ալ զգեստներուն ձևը կուտայ։ Եթէ մկրատը չըլլար, ի՞նչպէս շապիկ պիտի շինէինք, բաճկոն պիտի կարէինք և վերարկուներ պիտի պատրաստէինք։ Մկրատը կը կտրէ, բայց լաւ բան կընէ։ Դուք բոլորդ ալ քոյր ու եղբայր էք իրարու, որովհետև մէկմէկու կօգնէք և օգտակար գործ կընէք։

Կարի կողովին բնակիչները հասկցան իրենց սխալը, լռեցին և սկսան ուրախութեամբ աշխատիլ։

ԿՈՂՈՎ — Ծղօտէ հիւսուած աման
ԿԸ ՎԻՃԷԻՆ — Մէկը միւսին հակառակ կը խօսէին
ԱՆԳՈՒԹ — Գութ չունեցող, չար
ԲԱՃԿՈՆ — Զգեստ (ելէկ)
ՎԵՐԱՐԿՈՒ — Վրայէն հագնելիք զգեստ (բալթօ)

1. Տանտիկինը ա՛լ ի՞նչ գործիքներ ունի տանը պէտքերուն համար։
2. Ի՞նչ գործիքներ ունին կօշկակարը, երկրագործը, հիւսնը, որմնադիրը և երկրագործը։
3. Կա՞յ արհեստաւոր մը որ գործիք չունենայ. ինչո՞ւ։
4. Ի՞նչ ըսել է ուրեմն գործիք։

ՋՈՒՐԻՆ ԵՐԳԸ

Ես աղուոր ջուրն եմ, զով ջուրն եմ, բարի ջուրն եմ. ի՞նչ պիտի ընէին մարդիկ, եթէ չըլլայի ես։

Առաւօտէն մինչև իրիկուն կը հոսիմ աղբիւրէն. ոչ հանգիստ ունիմ, ոչ դադար։ Կերթամ տուները սափոր սափոր և աղտոտ ձեռքերը կաթի պէս ճերմակ կընեմ, աղտոտ երեսներն ալ՝ վարդի պէս կարմիր։

Ես բարի ջուրն եմ, ես անուշ ջուրն եմ։

Տեսէք ահա. սանը դրուած է կրակարանին վրայ ու ես կեռամ անոր մէջ. կեռամ որպէսզի մայրիկը պատրաստէ ձեզի նախաճաշ, ճաշ ու

ընթրիք։ Ես եմ դարձեալ որ կը լուամ անմաքուր լաթերն ու ճերմակեղէնները, տախտակամածն ու պատուհանին ապակիները։

Կը հոսիմ, կերթամ դաշտերը. կը ջրեմ ծառերն ու ծաղիկները, խոտերն ու բոլոր բոյսերը։ Ես առուակ կըլլամ, վտակ ու գետ կըլլամ. ես ծով ու ովկէանոս կըլլամ։

Ես կը բարձրանամ օդին մէջ ու ամպերը կը կազմեմ. և հովին թևերուն վրայ նստած, կերթամ երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ՝ անձրև տալու երաշտ գետիններուն, ցօղ տալու ծարաւ բոյսերուն։

Ես եմ որ ձիւն կըլլամ, կարկուտ կըլլամ, սառոյց կըլլամ։

Ես ազնիւ ջուրն եմ, ես օգտակար ջուրն եմ։ Ե՛ս եմ որ կենդանիներուն պապակը կանցընեմ և ձեզ կը զովացնեմ, սիրելի մանուկներ, երբ ամառը տաքէն սաստիկ ծարաւ կը զգաք։ Ես եմ որ կեանքը կը պահպանեմ, առողջութիւն տալով ամէնուն։

ՍԱՓՈՐ — Ջուր կրելու աման
ՍԱՆ — Աման մը, որուն մէջ կեrակուր կեփեն (թէնճէրէ)
ԿԵՌԱՄ — Եփ կու գամ
ՏԱԽՏԱԿԱՄԱԾ — Սենեակին գետինը՝ տախտակով ծածկուած
ՎՏԱԿ — խոշոր առու
ԵՐԱՇՏ — Անձրեւէ, ջուրէ զուրկ
ՊԱՊԱԿ — Սաստիկ ծարաւ

1. Ի՞նչպէս կրնանք գիտնալ թէ ձիւնը, սառոյցը և կարկուտը ջուր են։
2. Ինչո՞ւ օգտակար է ջուրը. ո՞ր բաներուն օգտակար կ'ըլլենք։

ՃԱՅԵԿՆ ՈՒ ՏԱՏՐԱԿԸ



Ճայեկն ըսաւ տատրակ
հաւուն.
— «Ինչո՞ւ կուլաս կուց
կուց արիւն
Որ կը հոսի դէպի ա-
ռուն։»

Տատրակն ըսաւ արօր հաւուն.
— «Գընաց գարուն, եկաւ աշուն,
Կըտրաւ ջրիկ աղբիւրներուն,
Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն,
Կըտրաւ ձանիկ կաքաւներուն.
Այնքան պիտի լամ ես անքուն
Որ գայ արիւն իմ աչքերուն...
Ես ի՞նչ ընեմ իմ ձագերուն»։

Ճայեկն ըսաւ տատրակ հաւուն.
— «Մի՛ լար, մի՛ լար, դուն այս աշուն,
Շուտով կու գայ բարի գարուն,
Լոյս կը ցաթի մեր լեռներուն,
Դուռ կը բացուի խեղճուկներուն.
Ես քեզ կառնեմ իմ թևերուն
Թըռիմ վրան մեծ ծառերուն,
Տանիմ հեռուն քեզ սարերուն.
Բոյն կը դնեմ մէջ քարերուն,
Տուն կը շինեմ մէջ գազերուն,

Երթիկ բանամ դէմ հով քամուն ,
Թոնիր թաղեմ մէջ այրերուն,
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն .
Մեր ցաւ կու տանք հարաւ քամուն։»

Գընաց աշուն , եկաւ գարուն .
Կաթէր ջըրիկ աղբիւրներուն ,
Կերթար լըցուէր բարակ առուն .
Ծըլաւ շուշան մեր սարերուն ,
Փունջ մանուշակ մէջ ձորերուն ,
Կու գայ ձայնիկ նոր գառներուն ։

ՃԱՅԵԿ — Տեսակ մը ագռաւ
ՏԱՏՐԱԿ — Վայրի աղաւնի
ՀԱՒ — Թռչուն
ԿՈՒՑ ԿՈՒՑ — Կաթիլ կաթիլ
ՍԱՐ — Բարձր տեղ, լեռան գագաթ
ԳԱՁ — Տեսակ մը խոշոր փուշ
ԵՐԹԻԿ — Տանիքի վրայի լուսամուտ, ինչպես նաեւ ծխնելոյզ
ԹՈՆԻՐ — Գետնափոր տեղ ուր հաց կեփեն
ԱՅՐ — Քարի կամ գետնի մէջ բացուած բնակարան
ՔԱՄԻ — Հով
ՇՈՒՇԱՆ — Ճերմակ ծաղիկ մը (*սուսամ*)
ՄԱՆՈՒՇԱԿ — Կապոյտ ծաղիկ

1. *Տատրակը ինչո՞ւ տխուր էր։*
2. *Ո՞վ մխիթարեց զայն ու ի՞նչ ըսաւ անոր։*
3. *Ինչո՞ւ ճայերն ալ չէր վախնար ձմեռէն։*
4. *Ըսէք թէ ի՛նչ տեսակ թռչուններ են ճայերն ու տատրակը։*

ՄԱՅՐԻԿՍ ԱՌՈՂՋԱՑԱ՜Ւ

Սաթենիկ այսօր շատ ուրախ է , որովհետեւ իր հիւանդ մայրիկը առողջացեր և ոտքի է ելեր։

— Գիտե՞ս, Մարիամ, կըսէ Սաթենիկ իր ընկերուհիին, այսօր մայրիկս իր անկողնէն ելաւ և սկսաւ աշխատի՜լ...

Սաթենիկ այնչա՜փ երջանիկ է , այնչա՜փ երջանիկ , որ կուզէ ամէնուն ալ յայտնել իր ուրախութիւնը ։

Մայրիկը երկար ատենէ իվեր հիւանդ էր պառկեր, անոր համար իրենց տանը մէջ ամէնուն ալ դէմքը տխուր էր ։ Սաթենիկին մեծ քոյրը Աննան էր որ կրակ կը վառէր , կերակուր կեփէր և տանը բոլոր գործերը կը տեսնէր ։

Սաթենիկ ինքն ալ, երբ իրիկունը տուն կերթար , անմիջապէս դասագրքերը վար դնելով , կօգնէր իր մեծ քրոջը ։ Սենեակը կաւլէր, աղբիւրէն ջուր կը կրէր և կը կատարէր Աննային ըսածները ։ Մանաւանդ կաշխատէր որ հիւանդ մայրիկը չնեղանայ . անոր քով կերթար , դեղը կու տար , ջուր կու տար որ խմէ ու հանգիստ մնայ ։

Ահա այսօր մայրիկը առողջացեր էր . տանը մէջ ամէն բան նորէն առաջուան վիճակին մէջ էր մտեր և բոլորն ալ ուրախ էին ։ Շատ աւելի ուրախ էր Սաթենիկ , որովհետեւ մայրիկը ըսեր էր անոր .

— Ապրիս, շա՛տ ապրիս, զաւա՛կս, դուն օգնեցիր քրոջդ Աննային և հոգ տարիր որ հանգիստ մնամ և շուտ առողջանամ ։ Ահա ես ալ առողջացայ ։

1. Ի՞նչ տեսակ աղջիկ մըն էր Սաթենիկ։
2. Հապա անոր քոյրը Աննա՞ն։
3. Ի՞նչ պէտք է ընեն զաւակները իրենց ծնողքին։
4. Ձեր ալ մայրիկը երբեք հիւանդացե՞ր է։ Երբ հիւանդացեր է, ի՞նչ էք զգացեր և ի՞նչ վիճակ է ունեցեր ձեր տունը։ Դուք ալ ձեր մայրիկը գո՞հ ձգե՞ր էք։

ՈԶՆԻՆ



Ոզնին գլուխը դուրս հանեց իր փուշերուն մէջէն և սկսաւ գանգատիլ.

— «Չեմ գիտեր ինչո՛ւ ամէնքն ալ գէշ գաղափար ունին իմ վրաս ։ Բայց ինծի պէս անվնաս ու անմեղ ուրիշ կենդանի մըն ալ կա՞յ աշխարհին մէջ ։

«Ես ո՛չ մարդուն, ոչ ալ ո՛և է մէկուն վնաս կը պատճառեմ։ Ընդհակառա՛կը, ես կուտեմ այն պզտիկ ճճիներն ու միջատները, որոնք վնասակար են պարտէզներուն ու բանջարեղէններուն։

«Զիս անոր համար կատեն թերևս, որ մարմինս ծածկուած է սուր սուր փուշերով ։ Բայց չէ՞ որ ոզնին ալ հոգի մը ունի և պէտք է որ ինքզինք պաշտպանէ իր թշնամիներուն դէմ։

«Տեսէք ահա, նապաստակները թեթևոտն են և իրենց թշնամիներուն ձեռքէն կազատին կրակի պէս փախչելով ։ Ցուները իրենք զիրենք կը պաշտպանեն իրենց ժանիքներովը և կատուները՝ իրենց ճանկերովը. ձին ու ջորին ունին աքացի, և խելօք ոչխարներն անգամ իրենց կոտոշները ։ Ե՞ս ինչ ունիմ։ Ես ալ ունիմ իմ փուշերս ։ Երբ մէկը ուզէ ինծի վնաս հասցնել, անմիջապէս ներս կը քաշեմ գլուխս, ոտքերս ու պոչս, և կը դառնամ փուշէ գնտիկ մը ։ Այսպէս, կազատիմ չարերուն ձեռքէն ։ Յանցա՞նք է ասիկա։ Ո՛չ ։



«Որջս կը ծածկեմ մամուռով և կը շինեմ հի՛ն, խոշոր ծառերուն կոճղին մէջ. հոն կը քնանամ ամբողջ ցորեկը։ Երբ մութը կոխէ և իրկուն ըլլայ, դուրս կելլեմ և կերթամ ուտելիք գտնելու։ Ինծի պէս կընեն բուերն ու չղջիկներն ալ ։

«Ձմեռն եկածին պէս՝ կը սկսիմ քնանալ։ Իմ քունս կը տևէ ամիսներ, այնպէս որ ո՛չ ձիւն կը տեսնեմ, ո՛չ փուք և ոչ ալ ցուրտ ։ Ես երկար քնանալը շատ կը սիրեմ, որովհետև խորունկ

քունը գիս կը կազդուրէ ու առողջութիւն կու տայ ինծի։

«Հիմա, դո՛ւք ըսէք, ազնիւ մանուկներ, իրաւունք ունի՞ն մարդիկ գիս ատելու ու գիս հալածելու։

«Պարտիզպանները կըսեն թէ ես իրենց պտուղները կուտեմ. հովիւները կըսեն թէ ես իրենց կաթը կը խմեմ. շուներն անգամ հակառակորդ են ինծի։

«Ի՜նչ սև ձիւն պիտի գար գլխուս, հա՜պա, եթէ փուշեր չունենայի . . .»

ՈԶՆԻ — Վայրի կենդանի մը
ՃՃԻ — Փոքր որդեր
ՄԻՋԱՏ — Մեղուի եւ ճանճի պէս փոքր կենդանիներ
ԹԵԹԵՒՈՏՆ — Արագ վազող
ԿՐԱԿԻ ՊԷՍ ՓԱԽՉԻԼ — Շատ արագ վազել
ԺԱՆԻՔ — Առջեւի սուր ակռայ
ԱՔԱՑԻ — Կենդանիներուն ոտքի ճարուածը
ՈՐՋ — Կենդանիներու բնակարան
ՄԱՄՌՈՒՌ — Կանաչ խոտի պէս բան որ կը բուսնի ծառերու կոճղին վրայ
ԿՈՃՂ — Ծառին ճիւղերէն վար ցցուող հաստ մասը
ՀԱԿԱՌԱԿՈՐԴ — Թշնամի

1. Ոզնին վնասակա՞ր կենդանի է. ինչո՞ւ։
2. Ի՞նչ կ՚ըսեն վնասակար չեղող կենդանիներուն և որո՞նք այդպէս են։
3. Ոզնին ինչո՞ւ փուշեր ունի։
4. Ինչո՞ւ գիշերները կ՚երթայ ուտելիք փնտռելու։
5. Ձմեռ ատեն ի՞նչ կ՚ընէ ոզնին։

Մանկական Աղօթք

ՎԱ՛ՂԸ, ՎԱ՛ՂԸ

Առաւօտուն երբ իր գուլպաները կը հագնէր, Զարուհի տեսաւ որ մէկ գուլպային կրունկը ծակեր է։ Ծակը հազիւ գնդասեղի մը գլխուն չափ կար, բայց Զարուհի ըսաւ.

— Վնաս չունի, տակաւին խոշոր չէ, վա՛ղը կը լեցնեմ։

Միւս օր ծակը արդէն սիսեռի մը չափ էր եղեր, բայց Զարուհի նորէն գլուխը քերեց և դարձեալ «Վաղը թող մնայ» ըսաւ։

Վերջապէս երբ կարկտնելու նստաւ, ծակը արդէն շատ ու շատ խոշորցած էր. այնպէս որ՝ զայն լեցնելու համար աւելի պիտի աշխատի, աւելի ժամանակ պիտի կորսնցնէ և գուլպան ալ շատ շուտ պիտի մաշի։ Իսկ եթէ առաջին օրէն լեցնէր փոքր ծակը, այդպէ՞ս պիտի ըլլար։

Զարուհիին դասընկերները երբ իրկունը տուն կերթան, անմիջապէս քիչ մը հանգչելէ ետք կը պատրաստեն իրենց վաղուան դասերը։

Բայց Զարուհին այդպէս չըներ.

— Ես վաղը կը պատրաստեմ, հիմա քիչ մը խաղամ, կըսէ։

Վաղը կըլլայ և Զարուհին իր դասերը չգիտեր, որովհետև միշտ անակնկալ բան մը արգելք եղած է իրեն։

— Վաղը կը կարեմ։

1002
9039
4/022.68
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Им А Мясникяна
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI—1922
имени А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

— Վաղը կը սորվիմ։
— Վաղը կը գրեմ։
— Վաղը կը մաքրեմ։

Այսպէս կըսէր Զարուհին, անոր համար ո՛չ վրան գլուխը նոր էր, ո՛չ դասերը գիտէր, ո՛չ գիրը պատրաստ էր, ոչ ալ զգեստները մաքուր էին։

Օր մը Զարուհի հարցուց իր մէկ ընկերուհիին.

— Ի՞նչպէս կընես որ ամէն օր դասերդ լաւ կը գիտնաս և բնաւ պակաս բան մը չունիս։

Դասընկերուհին պատասխանեց.

— Ի՜նչպէս կընեմ. ես երբեք «Վաղը, վա՜ղը» չեմ ըսեր։ Դուն ալ ինծի պէս ըրէ և պիտի տեսնես որ կը յաջողիս։

Զարուհի որոշեց այլևս «վաղը» չըսել, և իրաւ ալ քիչ ատեն ետք եղաւ դպրոցին առաջադէմ ու ամէնուն սիրելի աշխիկներէն մէկը։

ԿՐՈՒՆԿ — Ոտքին տակի կողմը
ԱՆԱԿՆԿԱԼ — Չյուսացուած, մտքէ չանցած

1 Զարուհիին գուլպային ծակը ինչո՞ւ մեծցաւ և ինչո՞ւ անոր գուլպան շուտ պիտի մաշի։
2. Զարուհին ինչո՞ւ դասերը չէր գիտեր. ինչո՞ւ Զարուհիին զգեստները մաքուր չէին. ինչո՞ւ անոր գիրը պատրաստ չէր ըլլար։
3. Ինչպէ՞ս հասկցաւ Զարուհին իր սխալը։



ԾՈՅԼ ԷՇԸ

Կար ու չկար, ծոյլ էշ մը կար։ Իր տէրը շատ հոգ կը տանէր անոր, բայց լաւ ալ կաշխատցնէր։

Երբ գարունը բացուէր, էշը պէտք է որ աղբ կրէր արտը, շաբաթը մէկ քանի անգամ քաղաք տանէր իր տէրը և քաղաքէն ալ ծանր ծանր բեռեր շալկած՝ գիւղ բերէր։

Ո՜րքան կուզէր որ ախոռէն դուրս չելլէ, կենայ իր մսուրին առջև և անուշ անուշ ծամէ յարդն ու գարին։

Ու մեր իշուկը կըսէր.

— Ո՜ւֆ, ինչ անիծած եղանակ է այս գարունը։ Աղբ կրէ, հող կրէ պարտէզը, ու հոգիդ հանէ։ Անգամ մը ամառ գար և հանգիստ ըլլայի։

Եկաւ ամառ։ Ծաղիկներուն տեղ՝ բուսան պարտէզներուն մէջ բանջարեղէններ և արտերուն մէջ ցորեն ու գարի։ Բայց էշը հանգիստ չունի։ Արտէն տուն կը կրէ ոսպ ու սիսեռ, յարդ ու ցորեն։ Գիւղէն քաղաք կը տանէ ձմերուկ ու սեխ, սոխ ու սխտոր։ Իր գործը շատ դժուար է, բեռը ծանր, արևն ալ կրակի պէս տաք։

— Ա՜խ, գետինն անցնիս, ամա՛ռ, կըսէ էշը. Երբ աշուն պիտի գայ որ քիչ մը հանգիստ ըլլամ։

Ահա աշուն։ Հասունցած է խնձորը, տանձը, խաղողը, ընկոյզը, գետնախնձորը և կաղամբը։ Էշը բեռ բեռ կը կրէ պտուղներն ու աշնան բանջարեղէնները, կը կրէ առաւօտէն մինչև իրկուն. դադար չունի, հանգիստ չունի և տքալով կը սպասէ ձմեռուան։

Ձմեռը խաղաղ ու մեռած եղանակ է. ո՛չ պտուղ կայ, ո՛չ բանջարեղէն, ո՛չ ալ հացահատիկ։ Տաք ախոռին մէջ, կը մտածէ մեր իշուկը, ոտքերս պիտի երկնցնեմ և պիտի պառկիմ հանգիստ։

Եկաւ հասաւ ձմեռն ալ։ Ձիւնը ռմներ է լեռներն ու դաշտերը, սառ կապեր են ջրերն ու գետինը։ Բայց էշը պէտք է որ փայտ ու ածուխ տանէ քաղաք։ Կը քալէ ձիւնին մէջէն, կը բարձրանայ զառիվերը և կըսէ տքալով.

— Ո՜ւէ, ի՛նչ սաստիկ ցուրտ է և ի՛նչ ծանր է բեռս։ Խե՛րն անիծած ձմեռուան. իրաւ որ գարնան պէս աղուոր եղանակ չի կա՛յ եղեր...

Ես մինչև հիմա ամէն բանին գէշ կողմը տեսայ միայն։ Բայց, իւրաքանչիւր եղանակ իր նեղութիւններուն հետ՝ ունի նաև իր հաճոյքներն ալ։ Այսպէս, գարունը ինծի ուտելիք կանաչ խոտ կը բերէ. ամառը կաթի պէս ճերմակ գարի կու տայ ինծի, որ գըթըռ գըթըռ կուտեմ տոպրակիս մէջէն. աշունն ալ կը հասցնէ կանաչ մարգեր, որոնց վրայ կը ցատկեմ ու կարածիմ։ Ո՛չ, ա՛լ պիտի չտրտնջամ։ Պիտի աշխատիմ ուրախութեամբ և ուրախութիւնը թեթև պիտի դարձնէ իմ բեռս։

ՄՍՈՒՐ — Ախոռին այն տեղը ուր կենդանիները կեր կուտեն
ՀԱՑԱՀԱՏԻԿ — Այն հատիկները, որոնցմէ հաց կը շինուի
ԶԱՌԻՎԵՐ — Դէպի վեր բարձրացող ճամբայ

1. Էշը ի՞նչ կ'ընէր գարունը, ի՞նչ կ'ընէր ամառը, աշունը, ձմեռը։
2. Ի՞նչ էր իշուն գանգատը։
3. Ի՞նչ մտածեց էշը երբ տեսաւ որ իր գանգատները անիրաւ են։
4. Ի՞նչպէս աշխատելու է որ աշխատանքը ծանր չերևնայ։



ՋԱՂԱՑ

Ջուրն է ահա
Կը փրշփրշայ
Ու կը փրշայ
Ջաղացքին մէջ
Իրարանցում,
Ալեկոծում ։

Երեք չորս հատ
Ջրաղացքար
Իրենց անդուլ
Ջախջախներով
Կը պտըտին,
Հա՜ կը դառնան ։

Դուրսը,
Ներսը
Իրարանցում,
Սայլի ճռինչ,
Քարի գոռոց։
Մէկը բեռը
Ներս կը կրէ ,
Մէկն ալ ահա
Դուրս կը բերէ ․
Մէկն աղօնը
Կը լեցնէ,
Ցորեն կու տայ՝
Ալիւր կառնէ ։

Տե՛ս, մէկ կողմն ալ
Ջաղացպանը
Ալրաթաթախ՝
Ալրտունը
Քարը տեղէն
Իջեցուցած ,
Անոր տակը
Ծըրջած վրան՝
Տո՛ւր որ կու տայ
Քարին՝ մուրճը,
Եւ կը թափէ
Կայծեր շուրջը ․
Կը տաշէ գայն
Եւ իր երգը
Կերգէ ուրախ։
— «Եկո՛ւր իմ քար,
Իմ ջաղացքար ,
Քեզ կռանեմ,
Խոր փոսիկներ,
Սուր ատամներ
Կուռ կռանով
Ծանր մուրճով
Շինեմ լանջիդ,
Որ դուն աղաս

Բրնաղօնը ,
Բրնաղօնը ,
Զօր աղօնը,
Ալի՜ւր, ալի՜ւր
Տաս աշխարհին
Է՛ւ ծառային ,
Է՛ւ արքային ։
Աշխարհը լայն ,
Մեր տեղը նեղ,
Հալինք, մաշինք
Մենք միատեղ ։
Եկո՛ւր, իմ քար,
Քեզ կռանեմ ,
Սուր ակռաներ,
Խոր փոսիկներ
Կուրծքիդ հանեմ։
Ես քու տէրը,
Ես քու գերին.
Եկուր հաց տանք
Մենք աշխարհին ․
Աշխարհը լայն ,
Մեր տեղը նեղ,
Հալինք, մաշինք
Մենք միատեղ ։»

ՋՐԱՂԱՑՔԱՐ — Այն կլոր ու խոշոր քարը որ կը դառնայ
եւ ցորենը ալիւր կը շինէ
ԱՆԴՈՒԼ — Անդադար
ՃՌԻՆՉ — Սայլին անիւներուն ձայնը
ԳՈՌՈՑ — Աղմուկ
ԱՂՕՆ — Աղալիք ցորեն
ԱԼՐԱԹԱԹԱԽ — Ալիւրով թաթխուած
ԱԼՐՏՈՒՆ — Այն տեղը ուր ալիւրը կը հաւաքուի
ԿՌԱՆՆԵՄ — Խոշոր մուրճով ծեծեմ
ԿՈՒՌ — Ուժով, զօրաւոր
ԿՌԱՆ — Մեծ մուրճ
ԼԱՆՋ — Կուրծք
ԱՐՔԱՅ — Թագաւոր
ԱՏԱՄ — Ակռայ

1. Ջաղացքին մէջ ի՞նչ բաներու աղմուկը կը լսուի։
3. Ինչո՞ւ ջաղացքարին վրայ փոսիկներ կը փորեն։
4. Ո՞վ է որ թէ՛ ծառային և թէ՛ թագաւորին հաց կու տայ, բայց ինք դարձեալ աղքատ կը մնայ։

ԼՍԷ՛, ՊԶՏԻԿ ԱՂՋԻԿ

Լսէ, պզտիկ աղջիկ, թէ ասեղը ինչ կըսէ քեզի։

«Ես քեզի բարեկամ պիտի ըլլամ և ա՛լ ասկէ ետք մենք իրարմէ պիտի չբաժնուինք։

«Ես աշխատութեան նշանակը պիտի ըլլամ։

«Առանց աշխատութեան, ո՛չ ուրախութիւն, ոչ երջանկութիւն կայ։

«Բայց լսէ մանաւանդ թէ ինչպէս ասեղ եղայ ես։ Հազարաւոր մարդիկ փորեցին գետինը, շինեցին խորունկ հորեր և գտան երկաթը։ Բայց այդ երկաթը կոշտ ու կոպիտ բան մըն էր. հանեցին զայն դուրս, հալեցին, մաքրեցին և անկէ ձուլեցին զիս։ Տե՛ս, հիմա ո՛րքան փայլուն, նուրբ ու թեթև եմ ես։

«Դուն չես գիտեր տակաւին թէ ինչպէս շինուած է նաև այն կտաւը, որուն մէջ կը շուլլես զիս ու կար կը կարես։ Դարձեալ հազարաւոր աշխատաւորներ, տաք արևին տակ, շաբաթ-

ներ քրտինք թափելով, ցաներ ու քաղեր են բամպակը, յետոյ ոմանք մանած մաներ են և ուրիշներ ալ այդ մանածէն կտաւ գործեր են։

«Այդպէս շինուած է նաև այն թելը, որ իմ ծակէս կանցնես և կը կարես քու կտորդ։

«Տե՛ս, ամէնքը աշխատած են քեզի համար. ըսել է որ դուն ալ պէտք է աշխատիս ուրիշներուն համար։

«Ահա իրկունը հայրիկդ յոգնած տուն կը վերադառնայ, երբ դիմաւորես զայն զուարթութեամբ, կը թեթևնայ անոր յոգնութիւնը։ Ահա մայրիկդ կուզէ հանգչիլ, որովհետև մինչև իրկուն դատեր ու բաներ է, երբ օգնես անոր ուրախութեամբ, քաղցր կերևնայ իր աշխատանքը։

«Յարգէ ամէնէն խոնարհ աշխատաւորները և ջանա՛ որ օր մը դուն ալ ջանասէր տանտիկին մը ըլլաս։

«Յիշէ իմ պատմութիւնս. եթէ խոնարհ գործաւորները չըլլային, ես ասեղ պիտի չըլլայի և դուն ասեղ պիտի չունենայիր։»

ՁՈՒԼԵԼ — Երկաթը կամ ոսկին հալեցնելով բան մը շինել
ՇՈՒԼԼԵԼ — Ասեղը լաթին մէջ մտցնել
ՋԱՆԱՍԷՐ — Աշխատասէր

1. Ասեղը ինչո՞ւ աշխատութեան նշանակն է։
2. Ի՞նչ բանէ շինուած է ասեղը։
3. Երկաթը ո՞ւրկէ կը հանեն և ի՞նչպէս անով առարկաներ կը շինեն։
4. Ալ ուրիշ ի՞նչ առարկաներ երկաթէ շինուած են։
5. Պատմեցէք թէ կտա՞ւը ո՛ւրկէ շինուած է և ի՛նչպէս։
6. Ինչո՞ւ պէտք է որ մենք ալ ուրիշներուն համար աշխատինք։

ԿՈՐՍՈՒԱԾ ԶՄԵԼԻՆ

1

Գարեգին դպրոցի բակին մէջ գմելի մը գը-տաւ, ճերմակ փղոսկրէ կոթով, սիրուն, շատ սիրուն գմելի մը ։ Կը նայի անոր վրայ, կը բանայ փայլուն շեղբը՝ որ սուր է և նոփ-նոր. կը գոցէ ու նորէն կը բանայ ։

Շատոնց է որ Գարեգին կը փափաքի գմելի մը ունենալ։ Գրեթէ իր բոլոր ընկերներն ալ ունին մէկ մէկ հատ, մինակ ինք չունի. ամէն անգամ որ մատիտին ծայրը պիտի հանէ՝ ստիպուած է

իր ընկերոջ գմելին ուզել ։

Ի՜նչ լաւ բան որ ահա այսպէս գեղեցիկ գմելի մը անցաւ ձեռքը ։ Գարեգին կը դնէ իր գրպանը և տուն կ'երթայ ։

Բայց սիրտը բոլորովին ուրախ չէ. և զարմանալի բան, նոյնիսկ չի համարձակիր մարդու յայտնել թէ գմելի մը գտած է ։

Կաշխատի ինքզինք համոզել թէ գէշ բան մը չէ ըրածը և գտածը իրենն է. բայց չէ՞ որ թէ մայրիկը, թէ ուսուցիչը ամէն ատեն ըսած են որ գտնուած բանը պէտք է տիրոջը տալ ։

Ա՜խ, ինչ լաւ պիտի ըլլար որ գմելին իրեն մնար ։

Գարեգին կը նստի դասերը սորվելու, բայց, ատեն ատեն, դուրս կելլէ, գրպանէն կը հանէ գմելին և գաղտուկ գաղտուկ անոր վրայ կը նայի։

Կը վախնայ որ մարդ չտեսնէ զայն. ինքզինք յանցաւոր կը զգայ ։

Յանցաւո՞ր ։ Ինչո՞ւ համար արդեօք ։

Ո՛հ, անոր համար որ Գարեգին գիտէ թէ այդ գմելին անշուշտ դպրոցի տղոցմէ մէկունն է. գիտէ թէ հիմա անոր տէրը շատ տխուր է. գիտէ վերջապէս թէ երբեք բարի բան մը չըներ՝ ուրիշին սեփականութիւնը իրեն քով պահելով ։

2

Երկար վարանելէ ետք, Գարեգին յանկարծ գրպանէն կը հանէ գմելին ու մայրիկին կը ցուցնէ.

— Տես, մայրիկ, ինչ աղուոր գմելի մը գտայ այսօր. իր տիրոջը տամ գայն, այնպէս չէ՞։

— Անշուշտ, անշուշտ, գաւակս, կըսէ մայրիկը։ Վաղը առտու կը տանես քու ուսուցչիդ կու տաս որ ան ալ տէրը գտնէ ու անոր յանձնէ։ Որքա՜ն ուրախ պիտի ըլլայ կորսնցնողը՝ երբ գտնէ իր գմելին։ Բայց ինչո՞ւ աւելի շուտ ցոյց չտուիր ինծի։

Գարեգին գլուխը վար կը կախէ և կը լռէ։

Մայրիկը անուշութեամբ կըսէ անոր.

— Ուրիշ անգամ պէտք չէ որ այդքան ուշացընես, այնպէս չէ՞։

— Ո՛չ, մայրիկ, խօսք կու տամ որ ըսածիդ պէս պիտի ընեմ։

Միւս օրը առաւօտուն, Գարեգին կը տանէ գմելին և կը յանձնէ ուսուցչին։

— Շա՜տ լաւ, տղաս, կըսէ ուսուցիչը. հարցընենք, տեսնենք որո՞ւնն է։

Քիչ մը ետք արդէն գմելին կը յանձնուի իր տիրոջը՝ որ այնքան ուրախ է, իր կորուստը գտած ըլլալով։ Բայց Գարեգին ալ շատ ուրախ է, որովհետև գիտէ թէ բարի բան մը ըրաւ՝ ուրիշին վերաբերած բանը իրեն չպահելով։

ՓՂՈՍԿՐ — Փիղի ոսկոր
ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Բանի մը որուն ըլլալը
ՎԱՐԱՆԻԼ — Երկու մտքէն ըլլալ
ԿՈՐՈՒՍՏ — Կորսուած բան
ՎԵՐԱԲԵՐԱԾ — Պատկանած

1. Գարեգին ինչո՞ւ գաղտուկ գաղտուկ կը նայէր գմելին վրայ և ինչո՞ւ յանցաւոր կը զգար ինքզինք։
2. Մայրիկը իրեն ի՞նչ պատուիրած էր։
3. Գարեգին լա՞ւ բան ըրած էր որ գմելին շուտով իր մայրիկին ցոյց չէր տուեր։
4. Ինչո՞ւ յետոյ Գարեգին շատ ուրախ էր։



ԱՂԲԻՒՐ

Աղբիւրս ո՞ւր է, ա՛րտ ու արօտ,
Այն ձեզի հետ պագտըրուող.
Աղբիւրս ո՞ւր է խորոտ-մորոտ,
Անուշ ձայնով գոչգըչող։

— Այն աղբիւրդ տապ ու տօթէն
Լեռան կըպաւ, սիրո՛ւն տըղայ,
Անսիրտ լեռան քար-սիրտ կուրծքէն
Հեկեկալով կը բըղխայ...

— Հէ՜յ ճան, ա՛յ ճան, իմ աղբիւր ճան,
Բայց մեր արտը անջուր մընաց...
Ակդ զըմրուխտ, տակդ մըրջան,
Սիրտս պապակ՝ անջուր մընաց...

— Մի՛ վըշտանար, խելօք տըղայ,
Դարձեալ վաղը գարուն կու գայ.

Գարուն կուգայ, նոր կեանք կու տայ
Ու աղբիւրդ կը գըլգըլայ։

ԱՐՏ — այն տեղը ուր ցորեն, գարի եւլ. կը ցանեն
ԱՐՕՏ — խոտուտ տեղ, կենդանիներուն արածելու տեղ
ԽՈՐՈՏ-ՄՈՐՈՏ — Գեղեցիկ, նաշխուն
ԳՈՉԳՉՈՂ — Վազող աղբիւրին ձայնը
ՏԱՊ — Շատ տաք
ՏՕԹ — Սաստիկ տաք
ՁՄՐՈՒԽՏ — Կանաչ թանկագին քար
ՄԸՐՋԱՆ — (տաճկերէն բառ), Հայերէնն է բուստ
ԳԼԳԼԱԼ — Վազող առուին ձայնը

1. *Տղան ի՞նչ հարցուց արտին ու արօտին։*
2. *Արտն ու արօտը ի՞նչ պատասխանեցին։*
3. *Յետոյ տղան աղբիւրին ի՛նչ ըսաւ։*
4. *Հապա աղբի՞ւրը ի՛նչ պատասխանեց։*
5. *Աղբիւրները ե՞րբ կը չորնան և ե՞րբ կը շատնան։*

ԵՐԳՈՂ ՊԶՏԻԿ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Ճնճղուկները շատ փոքր են, բայց թռչուններուն մէջ ամէնէն աշխուժն ու խելացին են։

Բոլոր երգող թռչունները, ինչպէս արտոյտը, կերնեխը, շիկահաւը, սոխակը, ամէնքն ալ ճընճղուկներու տեսակներ են։ Այսպէս նաև երաշտահաւը, եկքանիկը, կարմրալանջը և խայտիտը։

Սիրուն պզտիկ դեղձանիկը և ճանճահաւը, որոնց փետուրները կը փայլին յակինթի պէս, նոյնպէս ճնճղազգի են. բայց անոնք տաք կլիմայի տակ կապրին և մեր երկրին մէջ չեն գըտնուիր։

Բոլոր թռչուններուն մէջ դարձեալ ճնճղազգիներն են որ ամէնէն վարպետ բոյնը կը շինեն։ Անոնցմէ շատերը տարագնաց են, այսինքն աշուն եկածին պէս՝ կը մեկնին կերթան տաք երկիրներ, որովհետև ձմեռուան ցուրտին չեն դիմանար։ Ծիծեռնակներն ալ տարագնաց են և ամէնէն հեռաւոր ու գեղեցիկ ճամբորդութիւնը անոնք կընեն։

Տգէտ երկրագործներն ու պարտիզպանները

ճնճղազգիներուն նկատմամբ սխալ համոզում մը ունին. կը կարծեն թէ անոնք վնաս կու տան արտերուն, կը փճացնեն հունձքերը կամ կուտեն հասած պըտուղները։

Կասկած չկայ որ այս փոքրիկ արարածները կուտեն քանի մը հատիկներ կամ կը ցեցքեն քանի մը պտուղներ։ Զի՞ որ անոնք ալ փորիկ մը ունին և պիտի կշտացնեն։ Բայց, ասոր փոխարէն, հապա որքան մեծ բարիք կընեն պարտիզպաններուն և երկրագործներուն։ Անոնք կուտեն հունձքերուն, պարտէզներուն և բանջարեղէններուն վընասակար որդերը, ճճիները, թրթուրները և միջատները։ Իսկ այս վնասակար միջատները այնքան փոքր են, որ անոնց դէմ պարտիզպանն ու երկրագործը բան մը չեն կրնար ընել։ Եթէ թռչունները չըլլային, այդ աւերիչ միջատները ոչ հունձք պիտի թողէին արտերուն մէջ, ոչ պըտուղ՝ պարտէզներուն մէջ, ոչ ալ բանջարեղէն՝ բանջարանոցներուն մէջ։

Շիկահաւը եւ իր բոյնը

Մէկ ծիծեռնակը, օրուան մը մէջ երեք հարիւր հատ վնասակար միջատ կուտէ։ Ըսել է մէկ եղանակի մէջ վաթսուն հազար թշնամի կը պակսեցնէ մեր արտերուն ու պարտէզներուն համար։

Ո՛չ, թռչունները օգտակար են մեզի։ Խնայենք իրենց, հրճուինք իրենց գեղգեղանքէն և վայելենք իրենց գեղեցկութիւնը։

Երաշտահաւը եւ իր բոյնը

Գալ դասին պիտի լսէք թէ թագաւոր մը ի՛նչ պատիժ կրեց, երբ ուզեց բոլոր թռչունները հատցնել։

ԱՇԽՈՅԺ — Կրակոտ, շարժող
ԱՐՏՈՅՏ — Փոքր թռչուն մը. ունի գորշ ու ճերմակ փետուրներ: Ընդհանրապէս կը բնակի արտերուն մէջ. առտուն կանուխ օդին մէջ կը բարձրանայ եւ կ'երգէ :
ԿԵՐՆԵԽ — Փոքր թռչուն մը. ունի դեղին կտուց եւ փայլուն սեւ փետուրներ. շատ կը սիրէ պարտէզները :
ՇԻԿԱՀԱՒ — Փոքր թռչուն մը. ունի գորշ կամ կանաչորակ փետուրներ, որոնք երբեմն թուխ գոյնով խառն են:
ՍՈԽԱԿ — Փոքր թռչուն մը, որ շատ քաղցր կերգէ (*պիւլպիւլ*)

ԵՐԱՇՏԱՀԱՒ — Փոքր, կռուարար եւ վայրի թռչուն մը. կապոյտ, մոխրագոյն, դեղին եւ սեւ գոյներով նախշուն փետուրներով :
ԵԿԹԱՆԻԿ — Փոքր թռչուն մը, որ շատ անուշ կերգէ
ԿԱՐՄՐԱԼԱՆՋ — Փոքր թռչուն մը, որուն կոկորդն ու լանջը կարմիր են եւ փետուրները բաց դեղին են :
ԽԱՅՏԻՏ — Փոքր թռչուն մը, որ կը սիրէ բնակիլ ծառ չեղած տեղեր. կերգէ շատ անուշ: Կոկորդը կարմիր է, փորը կանաչ եւ վրայի փետուրները կապոյտ ու կանաչորակ:
ԴԵՂՁԱՆԻԿ — Փոքր թռչուն մը, որ ունի դեղին փետուրներ
ՅԱԿԻՆԹ — Կարմիր թանկագին քար մը (*եագութ*)
ԾՆԾՂԱԶԳԻ — Ծնծղուկի սերունդէ, ճնճղուկի տեսակէ
ԿԼԻՄԱՅ — Երկրի մը օդին վիճակը
ԱՐԱՐԱԾ — Մարդը, թռչունը, կենդանիները եւ աշխարհիս մէջ ստեղծուած ամէն բան
ԲԱԶՄԱԹԻՒ — Շատ ու շատ
ԱՒԵՐԻՉ — Աւերակ դարձնող, ոչնչացնող, փճացնող
ԽՆԱՅԵՆՔ — Վնաս չհասցնենք
ՀՐՃՈՒԻՆՔ — Ուրախանանք, մեծ ուրախութիւն զգանք
ԳԵՂԳԵՂԱՆՔ — Թռչուններու անուշ երգը

1. *Ո՞րն է ամէնէն գեղեցիկ երգող թռչունը։*
2. *Որն է ամէնէն վարպետ բոյն շինող թռչունը։*
3. *Ծնծղուկներն ու ծնծղազգիները ինչո՞ւ վնասակար չեն պարտէզներուն ու այգիներուն։*
4. *Մէկ ծիծեռնակը օրը քանի՞ հատ վնասակար միջատ կուտէ։*
4. *Մանուկները ի՛նչպէս պէտք է վարուին թռչուններուն հետ։*

ԱՆՄԵՂՆԵՐՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ

Ժամանակին Ֆրէտէրիք անունով Թագաւոր մը կար։ Այս Թագաւորը լաւ պատերազմիկ էր, բայց երկրագործութենէ բան չէր հասկնար։

Ֆրէտէրիք շատ կը սիրէր կեռասը։ Գիտէք թէ ճնճղուկներն ալ շատ կը սիրեն կեռասը· ուստի Թագաւորը կը վախնար թէ անոնք կուտեն կեռասները և իրեն բան չեն ձգեր։

Օր մը Թագաւորը սաստիկ բարկացաւ ճնճղուկներուն դէմ և հրաման հանեց որ իր հպատակները սպաննեն բոլոր ճնճղուկները ու մէկ հատ ողջ չթողուն։ Խոստացաւ որ մեծ պարգևներ պիտի տայ՝ ամենէն շատ թռչուն սպաննողին և թռչունի բոյն քանդողին։

Թագաւորի հրաման էր և կատարուեցաւ։ Սկսաւ անմեղներու կոտորած մը· սպաննեցին ճնճղուկները և բոլոր թռչունները· աւրեցին անոնց բոյները, կոտրեցին հաւկիթները· մէկ հատ ողջ թռչուն չի մնաց։

Ամբողջ երկրին մէջ տիրեց ամայութիւն· երկինքէն ոչ թև կանցնէր, ոչ ալ ճռուողիւն մը կը լսուէր։

Սակայն, տեսէք թէ ինչ պատահեցաւ։

Միւս տարին փտասակար միջատները այնքան շատցան, այնքա՜ն շատցան, որ պարտէզներուն մէջ պտուղ մը անգամ չի մնաց։ Եւ Ֆրէտէրիք, որ հզօր Թագաւոր էր, իր սեղանին վրայ չի կրցաւ մէկ հատիկ կեռաս գտնել աղանդերի համար։

Թագաւորը կրեց իր պատիժը։

Սաստիկ զղջաց իր անգթութեան վրայ· և որովհետև կեռաս շատ կը սիրէր, ստիպուեցաւ մարդ խրկել ուրիշ երկիրներ, ճնճղուկ գտնել և բերել իր թագաւորութեանը մէջ։

Այսպէս, ինչ չափ որ առաջ դրամ ծախսած

էր՝ ճնճղուկները սպաննելու համար, յետոյ երկու անգամ աւելի ծախսեց՝ նորեր բերել տալու համար։

ԱՆՄԵՂ — Մեղք չունեցող, յանցանք չունեցող
ԿՈՏՈՐԱԾ — Ջարդ
ՆՇԱՆԱԿ — Բան մը՝ որ իբրեւ օրինակ ուրիշ բան մը կը յիշեցնէ
ՊԱՏԵՐԱԶՄԻԿ — Լաւ պատերազմող
ՊԱՐԳԵՒ — Նուէր
ՀԶՕՐ — Զօրութիւնը եւ ուժը մեծ, զօրաւոր
ԱՂԱՆԴԵՐ — Կերակուրէն ետք ուտելիք պտուղ

1. Ֆրէտէրիք բա՞րի թագաւոր մըն էր. ինչո՞ւ։
2. Ֆրէտէրիք ինչո՞ւ սպաննել տուաւ թռչունները։
3. Յետոյ ինչո՞ւ զղջաց։
4 Ֆրէտէրիք ի՞նչպէս կրեց իր յանցանքին պատիժը։
5. Յանցաւորը պէ՞տք է որ պատժուի։

ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԵՐԸ

Հացահատիկներ կը կոչուին այն հատիկները, որոնք երկրագործները արտերու մէջ կը ցանեն և մարդիկ անոնցմէ հաց կը պատրաստեն, կամ, առանց ալիւր ընելու, եփելով կուտեն։

Հացահատիկներն են՝ ցորենը, գարին, բրինձը, եգիպտացորենը, հաճարը, վարսակը, և դեռ ուրիշներ։

Այս բոլորին մէջ ցորենն է որ ամէնէն շատ կը գործածուի հացի համար։ Գարին ձիուն, իշուն և ջորիին կը կերցնեն։ Բրինձով ալ զանազան տեսակ կերակուրներ կը պատրաստեն։

Հացահատիկները արտերուն մէջ կը ցանեն աշնան կամ գարնան։ Անոնք հողին մէջ կը ծլին և արմատներ կը ձգեն. արմատներուն վրայէն կը բարձրանայ ցօղունը և ցօղունին գագաթին վրայ կը կազմուի քիստը։ Այս քիստին մէջ է որ հատիկները կը ծնին, կը հասուննան և կը դեղնին։ Եւ երբ դեղնին՝ կը քաղեն։

Հացաբոյսերը իրենց արմատներով ջուր կը խմեն և հողին մէջէն սնունդ կառնեն. իրենց տերևներով ալ օդ ու լոյս կը ծծեն։ Եթէ հողը լաւ սնունդ չունենայ, եթէ երաշտ ըլլայ կամ եթէ շատ անձրև գալով տաք արեգակ չըլլայ,

հունձքերը կը փճանան և առատ արդիւնք չեն տար ։

Հացահատիկները մարդոց համար ամէնէն անհրաժեշտ սնունդն են։ Երկրագործը կը սերմանէ ու կը հնձէ ցանոնք ։ Ջաղացպանը ալիւր կը շինէ ցորենէն և տանտիկինները կամ հացագործներն ալ ալիւրը շաղելով մեզի հաց կը պատրաստեն ։

ՀԱՃԱՐ — (*Ջավտար*)
ՎԱՐՍԱԿ — (*Եուլաֆ*)
ԵՐԱՇՏ — Երբ անձրեւ չի գար եւ բոյսերը առանց ջուրի կը մնան
ՄՆՈՒՆԴ — Ուտելիք

1. Ո՞ւր կը բուսնին հացահատիկները։
2. Ո՞վ կը ցանէ զանոնք հողին մէջ և ե՞րբ կը ցանէ։
3. Հացահատիկները երբ բուսնին, քանի՞ մաս կունենան։
4. Բոյսը ի՞նչ բանով ջուր կը խմէ և սնունդ կ'առնէ։
5. Ի՞նչ բանով օդ ու լոյս կը ծծէ։
6. Մարդիկ ի՞նչ բանի կը գործածեն հացահատիկները։
7. Պատմեցէք թէ ի՛նչպէս կը ցանեն, կը քաղեն և հաց կը պատրաստեն։

ՁԱՐՄԱՆԱԼԻ ԿԵՆԴԱՆԻՆ

Շաւարշ շուկայէն տուն կու գար, երբ տեսաւ որ իր ընկերները խումբով կը վազեն դէպի միւս փողոցը ։

— Ի՜նչ կայ , ի՜նչ կայ հարցուց Շաւարշ, իր ընկերներէն մէկուն ։

— Կապիկը՜, կապիկը՜, պոռաց ընկերը և առանց կանգ առնելու՝ շարունակեց վազել։

Շաւարշ հետաքրքրութենէն ինք ալ սկսաւ վազել իր ընկերներուն գացած կողմը։

Եւ ահա ի՜նչ տեսնէ աղէկ։ Տեսաւ կենդանի մը, որուն վիզէն շղթայ մը անցուած է և շղթային ծայրէն բռնած է մարդ մը։ Մարդը տափ մը ունի ձեռքը, որ սկսաւ զարնել։

Ու կենդանին, որ մարդու նման դէմք, ձեռ-

քեր և ոտքեր ունէր, սկսաւ զանազան տեսակ խաղեր ընել, ցատկել, պարել, պառաւի պէս քալել, եայլն։

Շաւարշ կը զարմանար, բայց խնդուքն ալ չէր կրնար բռնել, նայելով այդ կենդանիին չարաճճի աչքերուն ։

Իր ընկերները պտուղ կը նետէին անոր ու կը պոռային.

— Կապիկ, ահա քեզի կեռաս. կեր տեսնենք։

Ու կապիկը կուտէր պտուղը և մարդու պէս կուտը բերնէն հանելով կը նետէր հետաքրքիր մանուկներուն ։

Միւս օր, երբ Շաւարշ ու իր ընկերները դպրոց գացին, սկսան իրենց ուսուցչին հարցումներ ընել կապիկին վրայ ։

Ուսուցիչը ըսաւ թէ մարդէն ետք ամէնէն խելացի կենդանին կապիկն է և տուաւ շատ մը տեղեկութիւններ կապիկին վրայ։ Յայտնեց նոյնպէս թէ մէկ քանի տեսակ կապիկներ կան, ինչպէս, օրանկօթանկ, շիմբազի, եայլն ։

Մանուկները չէին ուզեր որ ուսուցիչը ընդհատէ դասը և կը փափաքէին որ միշտ նոր ու նոր տեղեկութիւններ տայ ։ Ուստի ուսուցիչն ալ խոստացաւ գալ դասին շատ հետաքրքիր պատմութիւն մը ընել անոնց։

ԸՆԴՀԱՏԵ — Կես թողու

1. Ինչո՞ւ կապիկը մարդու կը նմանի։
2. Ինչէ՞ն գիտէք թէ խելացի կենդանի է կապիկը։

ԿԱՊԻԿԻՆ ԱՐՁԱՆԸ

— Մանուկներ, երէկ ձեզի խոստացայ որ կապիկին վրայ հետաքրքիր պատմութիւն մը պատմեմ, մտիկ կընէ՞ք։

— Այո՛, այո՛, պոռացին ուրախութեամբ ամէնքն ալ ։

Մանուկները լուռ կեցան և ուշադիր կը սպասէին ։

— Ֆրանսայի քաղաքներէն մէկուն մէջ, ըսաւ ուսուցիչը, արձան մը կայ շինուած. այդ արձանը Շարիման անունով հռչակաւոր շիմբազի կապիկի մը յիշատակին նուիրուած է ։ Լսեցէք

թէ ինչո՞ւ համար այս մեծ պատիւին արժանացաւ Տարիման ։

«Ճամբորդին մէկը, Աֆրիկէէն դարձած ատեն, իր հետ բերած էր Տարիմանը այդ քաղաքին մէջ։ Կապիկը ազատ համարձակ կը պտտէր քաղաքին փողոցները և ամէն տեղ կերթար անարգել։ Օր մը տեսաւ որ փոքրիկ մանուկ մը Ջրհորին քով խաղցած ատեն, յանկարծ գլորեցաւ ինկաւ անոր մէջ։ Կապիկը, առանց ժամանակ կորսնցնելու, ակնթարթի մը մէջ բռնեց դոյլին չուանը, Ջրհորէն վար սահեցաւ, գրկեց խեղդուելու վրայ եղող մանուկը և վեր բարձրացաւ, ազատելով զայն մահէ ։

«Քաղաքացիները ահա կապիկին այս անձնուիրութեանը համար էր որ, երբ մեռաւ անիկա , արձան մը շինեցին իր անուան ։

«Տարիման ողջ եղած ատեն քաղաքին մէջ կը վայելէր ամէն տեսակ ազատութիւն. առանց արգելքի կը մտնէր ամէն տուն, կը մտնէր ամէն խանութ և իր ուզած անուշ միրգերն ու կանաչեղէնները ընտրելով կուտէր։

«Ասկէ զատ, օրուան մէկ մասը կանցնէր մանուկներու հիւանդանոցին մէջ. հոն հազարումէկ զուարճալի խաղեր ու կատակներ կընէր և կը զուարթացնէր հիւանդ մանուկները ։ Մանուկները շատ կը սիրէին զինք»։

Պատմութիւնը աւարտելէն ետք, ուսուցիչը ըսաւ իր աշակերտներուն.

— Կը տեսնէք, զաւակներս, կենդանիներէն շատերը ոչ միայն մեզի պէս խելք ունին, այլ շատ անգամ ցոյց կու տան նաև անձնուիրութեան ու այլասիրութեան գեղեցիկ օրինակներ։

ԱՐՁԱՆ — Քարով կամ պղինձով շինուած մարդու, կենդանիի պատկեր
ՀՌՉԱԿԱՒՈՐ — Անուանի
ՅԻՇԱՏԱԿ — Անունը յիշելը, չմոռնալը
ԱՆԱՐԳԵԼ — Առանց արգելքի
ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ — Ուրիշին համար իր անձը նուիրել
ԱՅԼԱՍԻՐՈՒԹԻՒՆ — Ուրիշները սիրել

1. Ինչո՞ւ Տարիման կապիկին համար մարդիկ արձան շինեցին։
2. Ինչո՞ւ մարդիկ արձան կը շինեն և ո՞ր տեսակ մարդոց համար։
3. Ի՞նչ ըսել է հիւանդանոց։ Ինչո՞ւ հիւանդանոց կը շինեն։

Ուսուցչէն կը խնդրենք բացատրել այլասիրութեան ու անձնուիրութեան կարեւոր նշանակութիւնը։

ՔԱՄԻՆ ՈՒ ՄԱՐԱԳԸ

Քամին վազեց արագ արագ,
Կեցաւ, կանչեց. — «մարա՛գ, մարա՛գ,
Գիտե՞ս թէ ի՛նչ ուժի տէր եմ,
Բա՛ց դուռըդ որ քեզ յարդ բերեմ։»

Մարագն ըսաւ. — «Գը՛նա՛ բանիդ,
Ես կարօտ չեմ քու դարմանիդ.
Յարդդ քեզի, զօրաւո՛ր տէր,
Իմ դարմանս դուն մի՛ տաներ։»

ՄԱՐԱԳ — Այն տեղը ուր յարդ կը լեցնեն
ԴԱՐՄԱՆ — Յարդ, կենդանիներու ուտելիք

1. Քամին ի՞նչ ըսաւ մարագին։
2. Մարագը ի՞նչ պատասխանեց։ 3. Ինչո՞ւ այդպէս պատասխանեց։

ԵՐԿՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ

1

Տիգրան Վարդանեան հպարտ է, որովհետև իր հայրը վաճառական է։ Իր հօրը անունն է Վարդան էֆէնտի։ Վարդան էֆէնտի գեղեցիկ, մաքուր զգեստներ կը հագնի, ճերմակ օձիք կը դնէ և մետաքսէ փողկապ կը կապէ։

Տիգրանին ընկերն է Մարտիրոսը։ Մարտիրոսին հայրը գեղեցիկ լաթեր չի հագնիր և մետաքսէ փողկապ չի դներ. անոր ձեռքերը միշտ սև են և թանձր կոշտերով ծածկուած։ Մարտիրոսին հայրը երկաթագործ է։

Տիգրան անցած օր վէճի բռնուեցաւ Մարտիրոսին հետ ու բարկութեամբ պոռաց անոր երեսին.

— «Քու հայրդ անօթիին մէկն է»։

Մարտիրոս սաստիկ վիրաւորուեցաւ, աչքերուն մէջ արցունքներ լեցուեցան, բայց կրցաւ զսպել ինքզինք և չուզեց նախատել իր ընկերը։ Երբ իրկուն եղաւ, Մարտիրոս լալով իր հայրիկին գանգատեցաւ Տիգրանին ըսածէն։

Միւս օրը, Մարտիրոսին հայրը իր տղուն հետ դպրոց եկաւ և մօտենալով ուսուցչին, անոր յայտնեց Տիգրան Վարդանեանի անիրաւ վարմունքը։

Այդ միջոցին Տիգրանին հայրն ալ, սովորա-

կանին պէս, զպրոց կը բերէր իր տղան։ Լսեց որ երկաթագործը իր անունը կու տար՝ ուսուցչին հետ խօսելով։ Մօտեցաւ անոնց և հարցուց թէ ինչ է պատահեր։

— Գիտէք, Վարդան էֆէնտի, այս արհեստաւորը եկած է գանգատելու Տիգրանին վրայ, որովհետև Տիգրանը անոր տղուն ըսածէ թէ «քու հայրդ անօթիին մէկն է»։

2

Վարդան էֆէնտին յօնքերը կախեց և հարցուց Տիգրանին.

— Ճի՞շդ է որ այդպիսի խօսք մը ըսիր։

Տիգրան՝ գլխահակ, գետինը կը նայէր և չէր պատասխաներ։

Այն ատեն հայրը բռնեց անոր թևէն, քաշեց Մարտիրոսին քով և ըսաւ.

— Ներողութիւն խնդրէ Մարտիրոսէն։

Երկաթագործը ուզեց որ Վարդան էֆէնտին ներէ Տիգրանին. բայց Վարդան էֆէնտին ըսաւ, «ո՛չ, ո՛չ, թողէք»․ և դարձեալ հրամայեց իր տղուն.

— Ներողութիւն խնդրէ։ Կրկնէ այսպէս, — «Ներողութիւն կը խնդրեմ, Մարտիրոս, այն ամօթալի, անվայել և անմիտ խօսքին համար, որ ես ըսի քու հօրդ. քու հայրդ այնքան ազնիւ մէկն է՝ որ իմ հայրիկս պատիւ կը սեպէ անոր ձեռքը սեղմելով»։

Տեսնե՛նք, ի՛նչ կայ մէջը

Տիգրան ամօթահար, կրկնեց իր հօրը ըսած խօսքերը ցած ձայնով·

— Ներողութիւն կը խնդրեմ, Մա՛րտիրոս... այն ամօթալի... անվայել... և անմիտ... խօսքին համար... որ ես ըսի... քու հօրդ... քու հայրդ այնքան ազնիւ մէկն է... որ իմ հայրիկս ... պատիւ կը սեպէ... անոր ձեռքը սեղմելով...

Այն ատեն Վարդան էֆէնտին բռնեց երկաթագործին խոշոր ձեռքը, և բարեկամութեամբ սեղմեց։

— Կը խնդրեմ, ըսաւ Վարդան էֆէնտին ուսուցչին, եթէ կարելի է՝ Տիգրանը ասկէ ետք նստեցուցէք Մարտիրոսին հետ մէկ գրասեղանի վրայ։

Ուսուցիչը Տիգրանն ու Մարտիրոսը նստեցուց մէկ գրասեղանի վրայ։ Վարդան էֆէնտին մնաս բարով ըսաւ և մեկնեցաւ։

Երկաթագործը կեցաւ տակաւին մէկ քանի վայրկեան և տեսաւ թէ ինչպէս երկու մանուկները նստեցան քով քովի, մոռցած ամէն բան և սրտով երկու եղբայրներ եղած։ Ապա, մօտեցաւ Տիգրանին և իր խոշոր, հաստ ձեռքերովը շոյեց անոր գլուխը ու ինք ալ մեկնեցաւ։

Ուսուցիչը այն ատեն դարձաւ դասարանին աշակերտներուն և ըսաւ·

— Մի՛ մոռնաք, մանո՛ւկներ, թէ քիչ մը

առաջ ինչ որ տեսաք՝ այս տարուան ձեր ամէնէն գեղեցիկ դասերէն մէկն էր որ առիք ։

ՕՁԻՔ — Զգեստի այն ճերմակ մասը որ մարդիկ իրենց վիզին շուրջը կը դնեն
ՄԵՏԱՔՍԷ — Շերամին թելէն հիւսուած (*իփէքլի*)
ՓՈՂԿԱՊ — Զգեստի այն մասը որ մարդիկ կը գործածեն իրենց կուրծքին վրայ իբրեւ զարդ
ՆԱԽԱՏԵԼ — Գէշ խօսք ըսել
ԳԼԽԱՀԱԿ — Գլուխը վար ծռած
ԱՄՕԹԱԼԻ — Ամօթով լեցուն
ԱՆՎԱՅԵԼ — Չվայելող, պատիւ չբերող
ԱՆՄԻՏ — Յիմար, անխելք
ԱՄՕԹԱՀԱՐ — Շատ ամչցած
ՇՈՅԵՑ — Ձեռքով կամաց մը շփեց

Կը խնդրենք ուսուցչէն ընդլայնել այս դասը խօսակցութեամբ և տպաւորել դասին ոգին տղոց մտքին մէջ։



ԱՐԱԲԻ ՄԸ ՁԻՆ

Անգամ մը արաբ ցեղապետ մը գերի բռնըւեցաւ իր թշնամիներուն կողմէ։ Կռիւը սաստիկ եղած էր և իր հպատակներէն շատերը սպաննըւած էին, շատերն ալ գերի բռնուած ։

Ցեղապետը ինք ալ վիրաւորուած էր թեւէն. և որովհետև վէրքը մահացու չէր, թշնամիները կապեր էին զինք ուղտի մը վրայ և կը տանէին իրենց հետ։ Գերի առած էին նաև ցեղապետին ձին, որ ազնիւ նժոյգ մըն էր։

Գիշերը պառկեցան ամէնքն ալ անապատին մէջ ։

Բոլոր գերիներուն, ինչպէս նաև ցեղապետին

ոտքերը պինդ կապած էին կաշիէ փոկերով, որպէս զի չըլլայ թէ փախչին։

Քունը չէր գար ցեղապետին, որովհետև սաստիկ կը ցաւէին իր վէրքերը։ Յանկարծ խաւարին մէջէն լսեց նժոյգի մը խրխնջիւնը։

Ցեղապետը ճանչցաւ իր ձիուն ձայնը և փափաքեցաւ երթալ, վերջին անգամ մըն ալ տեսնել զայն։ Երեսի վրայ քսուելով, սողալէն սողալէն՝ գնաց մինչև այն վրաններուն քով որոնց ցիցին կապած էին նժոյգը։ Մօտեցաւ անոր և ըսաւ.

— Իմ ազնիւ երիվարս, դո՛ւն ալ ինծի պէս բանտարկեալ պիտի ըլլաս։ Քեզ ալ գերի կը տանեն ահա։ Ա՛լ ո՛չ ուղտի կաթ խմցնող պիտի ըլլայ քեզի, ոչ ալ գարի կերցնող։ Անապատին մէջ չպիտի սուրաս ազատ հովին պէս և պիտի ըլլաս ինծի նման թշուառ։ Բայց ո՛չ, եթէ ես գերի եմ, գոնէ դուն ազատ եղիր. Թռիր, վերադարձիր իմ վրաններս, գնա՛, կանգ առ անոնց առջև, գլուխդ ներս երկնցուր դռնէն և լզէ իմ փոքր զաւակներուս ձեռքերը...

Եւ ցեղապետը ակռաներով քակեց իր նժոյգին պարանէ ոտնակապերը։ Կենդանին ազատ եղաւ, բայց տեսաւ որ իր տէրը վիրաւորուած է և անոր ոտքերը շղթայակապ են. իր բնազդովը հասկցաւ այն բանը, ինչ որ ո և է լեզուով անկարելի էր հասկցնել իրեն։ Գլուխը ծռեց, հոտոտեց իր տէրը և խածնելով անոր կաշիէ գօտիէն՝ սկսաւ քառասմբակ արշաւել։

Հասաւ տիրոջը վրանները, վար դրաւ իր տէրը աւազներուն վրայ, անոր կնկանն ու զաւակներուն առջև, բայց ինքն ալ անմիջապէս ինկաւ գետին ու հոգին փչեց յոգնութենէն։

Մեռաւ ազնիւ կենդանին, բայց ամբողջ ցեղը լացաւ իր վրայ և իր պատմութիւնը աւանդեց բերնէ բերան։

ՑԵՂԱՊԵՏ — Ցեղի մը մեծաւորը, իշխանը
ՄԱՀԱՑՈՒ — Մահ պատճառող
ՈՒՂՏ — Տեսակ մը կենդանի (*դէվէ*)
ՆԺՈՅԳ — Ազնիւ տեսակի ձի
ԱՆԱՊԱՏ — Երկիր մը որ աւազով ծածկուած է, ոչ ջուր ունի ու ոչ ալ բոյս.
ՓՈԿ — Կաշիէ կապելիք (*ղայիշ*)
ԽՐԽՆՋԻՒՆ — Ձիուն ձայնը
ՎՐԱՆ — *Չադր*
ԵՐԻՎԱՐ — Արագ վազող ընտիր ձի
ՍՈՒՐԱԼ — Խիստ արագ վազել
ՇՂԹԱՅԱԿԱՊ — Շղթայով կապուած
ԲՆԱԶԴ — Կենդանիներուն խելքը
ՔԱՌԱՍՄԲԱԿ ԱՐՇԱՒԵԼ — Խիստ արագ վազել
ԱՒԱՆԴԵԼ — Յանձնել, բան մը տալ ուրիշին

1. *Արաբները ո՞ւր կը բնակին և ի՞նչ տեսակ ժողովուրդ են։*
2. *Ի՞նչ ըսել է ցեղապետը գերի բռնուած էր։*
3. *Ի՞նչ ըրաւ ցեղապետը երբ իր ձիուն խրխնջիւնը լսեց։*
4. *Ցեղապետը ի՞նչ ըսաւ իր ձիուն և ի՞նչ ըրաւ։*
5. *Ձին ի՞նչպէս հասկցաւ թէ իր տէրը գերի է բռնուած։*
6. *Ինչպէ՞ս ազատեց իր տէրը և ինք ի՞նչ եղաւ։*
7. *Ձիուն այս ըրածը ի՞նչ կը կոչուի։*
8. *Ձին կը խրխնջայ, հապա է՞շը, կո՞վը, ա՞յծը, շո՞ւնը, կատո՞ւն...*

Ո՞Վ ԿԸ ՇԻՆԷ ՄԵՂՐԸ

Ուսուցիչը հարցուց իր աշակերտներուն.

— Գիտէ՞ք, մանուկներ, թէ ո՛վ կը շինէ մեղրը:

Եւ ահա ամէնքն ալ միաբերան պոռացին. «Մեղո՛ւն, մեղո՛ւն» :

— Շա՛տ լաւ, բայց գիտէ՞ք թէ քանի տեսակ մեղու կայ և ո՛վ է բուն մեղրը շինողը :

Տղաքը լռեցին, որովհետև չէին գիտեր :

Այն ատեն ուսուցիչը ըսաւ .

— Տէ ուրեմն, մտիկ ըրէք որ ըսեմ ձեզի : Մեղուները երեք տեսակ են. մայր թագուհին՝ որ միայն հաւկիթ կածէ և նոր ձագեր կը բերէ. արու մեղուները՝ որ փեթակին վրայ կը հսկեն, և գործաւորները որ ծաղիկներուն հիւթը կը ծծեն, մեղր ու մեղրամոմ կը պատրաստեն և ունին մէկ մէկ սուր խայթոց :

Մայր թագուհի

Գործաւոր մեղու Արու մեղու

«Բայց, գիտէ՞ք, տղա՛ք, մէկ փեթակի մէջ միայն մէկ հատ մայր թագուհի կայ. երբ ուրիշ մըն ալ ծնի, այն ատեն ներսը մեծ բզզիւն մը, սաստիկ ժխոր մը կը բարձրանայ. հին մայր թագուհին իր հետ առնելով բազմաթիւ արու մեղուներ և գործաւորներ, կը ձգէ կը հեռանայ

հին փեթակը. կերթայ ուրիշ տեղ՝ նոր փեթակ կազմելու :

— Այո՛, այո՛, ըսին մանուկները. գիւղացիները այդ բանին կըսեն թէ «մեղուն պարս տուաւ» :

— Ճիշդ է, ըսաւ ուսուցիչը: Այսպէս, մեղուները քիչ տարիներու մէջ կը բազմանան և շատ արդիւնք կու տան, եթէ գիւղացիները լաւ գիտնան խնամել զանոնք, եթէ գիտնան մեղուաբուծութիւն: Մենք մեղուներուն մեղրը կուտենք, մոմը կը վառենք և ուրիշ բաներու կը գործածենք : Մեղուն օգտակար միջատ է և գիւղացիներուն համար շահաբեր:

ԱՐՈՒ ՄԵՂՈՒ — Մանչ մեղու
ՀԻՒԹ — Ծաղիկին ջուրը
ԲԶԶԻՒՆ — Մեղուին կամ ճանճին բըզ-բըզ ձայն հանելը
ԺԽՈՐ — Մեծ աղմուկ
ԿԸ ԲԱԶՄԱՆԱՆ — Կը շատնան
ԽՆԱՄԵԼ ՏԱՆԻԼ — Հոգ տանիլ
ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ — Մեղուներ պահելու եւ աճեցնելու գիտութիւնը
ՇԱՀԱԲԵՐ — Վաստակ բերող

1. Քանի՞ տեսակ մեղու կայ։
2. Ի՞նչ կ'ընէ մայր թագուհին։
3. Ի՞նչ կ'ընեն արու մեղուները։
4. Ի՞նչ կ'ընեն գործաւորները։
5. Մեղուն ինչո՞ւ օգտակար միջատ է։
6. Մեղուները լաւ պահելու և անոնցմէ շատ օգուտ քաղելու համար ի՞նչ պէտք է գիտնալ։



ՈՍԿԻԻՆ ԿԱՐԱՍԸ

1

Ես մեր ծերերէն եմ լսեր, մեր ծերերն ալ իրենց պապերէն, անոնց պապերն ալ իրենց մեծերէն՝ թէ ժամանակով աղքատ հողագործ մը կար. այս հողագործը ունէր մէկ օրավար հող և մէկ լուծ եզ։

Ձմեռը աղքատ հողագործին եզները սատկեցան։ Գարունը, վար ու ցանի ատեն, եզ չունէր որ վարէր, ուստի հողը վարձով տուաւ իր դրացիին։

Այս դրացին, վարելու ժամանակ, կը տեսնէ որ խոփը բանի մը կը դպնայ։ Կը ծռի, հողը մէկ

կողմ կընէ և կը գտնէ կարաս մը ոսկի։ Եզները լծուած կը թողու, կը վազէ գիւղը հողատիրոջ քով և կըսէ.

— Աչքդ լոյս, դրացի եղբայր. հողիդ մէջէն կարաս մը ոսկի դուրս ելաւ, եկուր տար։

— Չէ, աղբար, այդ ոսկին իմս չէ, կը պատասխանէ հողատէրը։ Արտին վարձքը դուն ես տուեր, դուն ես վարեր, ուստի հողին մէջէն ինչ որ դուրս գայ՝ քու հալալ հախդ է. ոսկի է դուրս եկեր, թող ոսկի ըլլայ, դարձեալ քուկդ է։

Կը սկսին վիճիլ. չեն համաձայնիր և կերթան թագաւորին մօտ գանգատի։

Թագաւորը կարաս մը ոսկիին ձայնը կը լսէ թէ չէ, աչքերը չորս կը բանայ և կըսէ.

— Ո՛չ քուկդ է, ոչ ալ անորը. ոսկին իմ հողիս մէջէն է ելեր, իմս է։

Մարդ կառնէ հետը և կերթայ որ հանէ բերէ։ Կերթայ, բայց ինչ տեսնայ աղէկ. կարաս մը՝ մինչև բերանը լեցուն օձ...։ Թագաւորը զարհուրած՝ ետ կը դառնայ։

2

Թագաւորը հրաման կընէ որ պատժեն խաբեբայ գիւղացիները։

— Չէ, թագաւո՛ր, ապրած կենաս, կաղաչեն խեղճերը. մեզ ինչու կը պատժես. լաւ չես տեսեր, օձ չի կայ այն տեղ, ոսկի է, ո՛սկի...

Թագաւորը նոր մարդ կը խրկէ որ երթան անգամ մըն ալ ստուգեն։ Մարդիկը կերթան և լուր կը բերեն թէ իրաւ ոսկի է։

Շատ կը զարմանայ Թագաւորը և ինքնիրեն կըսէ թէ «գուցէ աչքերս լաւ չտեսան կամ տեսածս այն կարասը չէր»։ Վեր կը կենայ և անգամ մըն ալ կերթայ։

Կը բանայ կարասը, — դարձեալ մէջը լեցուն օձ։

Այս ի՜նչ հրաշք է, կըսէ Թագաւորը, չեմ հասկնար։ Խորհուրդի կը հրաւիրէ իր երկրին իմաստուններըը։

— «Բացատրեցէք, կը հրամայէ իր իմաստուններուն. այս երկու մարդիկը իրենց հողին մէջ կարասով ոսկի են գտեր. ես որ կերթամ՝ կարասին մէջ օձ կը գտնեմ, ասոնք որ կերթան՝ ոսկի կը գտնեն. ի՞նչ է ասոր գաղտնիքը։

— Եթէ չես բարկանար, բացատրենք, Թագաւոր ապրած, կըսեն իմաստունները։ Կարասով ոսկին աղքատ հողագործներուն արդար աշխատանքին համար է խրկուած. երբ անոնք կերթան՝ իրենց վարձքին կերթան և միշտ ոսկի կը գտնեն. իսկ երբ դուն կերթաս, կերթաս ուրիշին իրաւունքը յափշտակելու, անոր համար՝ ոսկիի տեղ օձ կը գտնես»։

Թագաւորը իրաւունք կու տայ իմաստուններուն, և դառնալով կըսէ հողագործներուն.

— Տէ, հիմա գացէք, տէր եղէք ձեր իրաւունքին և երկու եղբօր պէս հաշտութեամբ բաժնեցէք գանձը ձեր մէջ։

ՊԱՊ — Մեծ-հայր
ԽՈՓ — Այն երկաթը որ արօրին ծայրը կանցնեն
ԿԱՐԱՍ — Հողէ շինուած եւ թրծուած խոշոր աման որ գինի եւ ջուր լեցնելու կը գործածուի
ՀԱԼԱԼ ՀԱԽ (տաճկերէն բառեր) — Արդար իրաւունք
ՁԱՐՀՈՒՐԱԾ — Սաստիկ վախցած
ԱՊՐԱԾ ԿԵՆԱՍ — Շատ ապրիս
ՍՏՈՒԳԵԼ — Բանի մը ինչ ըլլալը լաւ մը քննել հասկնալ
ՎԱՐՁՔ — Բան մը շահով մէկուն տալ ատենի մը համար. կը նշանակէ նաեւ աշխատանքի մը փոխարէն առնուած վարձատրութիւն
ԳԱՆՁ — Հարստութիւն, ոսկի

1. Ինչո՞ւ գիւղացիները երբ կարասին վրայ կ'երթային, ոսկի կը գտնէին, իսկ երբ Թագաւորը կ'երթար՝ օձ կը գտնէր։
2. Ըսէ է, ի՞նչպէս Թագաւոր էր այս Թագաւորը։
3. Հրաշքը ի՞նչ հասկցնել կ'ուզէր յափշտակիչ Թագաւորին։
4. Ո՞վ պէտք է վայելէ աշխատութեան արդիւնքը. աշխատո՞ղը թէ ուրիշը՝ որ այդ աշխատութեան մէջ մաս չունի։
5. Հապա ինչո՞ւ Թագաւորը ըսաւ երկու գիւղացիներուն թէ «Գացէք, եղբօր պէս բաժնուեցէք»։

ԱՂԸ

Ձեր մայրիկը ամէն օր որ կերակուր պատրաստէ, անպատճառ անոր մէջ աղ կը ձգէ։ Հացի սեղանին վրայ դուք միշտ կը տեսնէք աղամանը. անոր մէջ լեցուած է ճերմակ շաքարի պէս հատիկ հատիկ աղը։

Բայց երբեք չէք հարցուցած թէ ի՛նչ է աղը և ինչու մարդիկ այնքան կը գործածեն զայն։

Աղը կը գտնուի այն տեսակ հողերու մէջ, որոնք շատ հին ատենները ծովի կամ լիճի ջուրով ծածկուած են եղեր։ Աղը կը գտնուի ծովի ջուրերուն և կարգ մը աղի լիճերու մէջ։

Մեր գործածած աղը ուրեմն կամ աղահանքերէն կելլէ, կամ աղի լիճերէն։ Աղահանքերէն կը հանեն խոշոր խոշոր կտորներով. ապա կը փշրեն և կը մանրցնեն։ Իսկ աղի լիճերէն ջուրը առնելով կը կրեն մեծ աւազաններու մէջ և կը թողուն արևին տակ. արևին տաքութենէն ջուրը կը շոգիանայ և տակը կը մնայ բիւրեղացած աղը։

Այսպէս պատրաստելով, մարդիկ կը բերեն շուկան և կը ծախեն։

Աղը թէ մարդոց և թէ կենդանիներուն առողջութեան համար անհրաժեշտ բան մըն է։ Առանց աղի, մենք շատ մը հիւանդութիւններ պիտի ունենայինք։ Աղին պէտքը այնքան բնական և այնքան զգալի է, որ կենդանիներն ան-

դամ կը փնտռեն զայն և լեռներու մէջ աղի քարեր գտնելով կը լզեն։ Օրինակի համար, Ափրիկէի մէջ շատ տեղեր աղ չի կայ. այս պատճառով այդ երկիրներուն մէջ բնակող խափշիկները երբ հազար դժուարութեամբ ձեռք կը ձգեն զայն, կը սկսին ափերով ուտել։

Աղը աւելի շուտով կը հալի պաղ ջուրին՝ քան թէ տաք ջուրին մէջ. մինչդեռ շաքարը և ուրիշ լուծուող մարմիններ ճիշտ ասոր հակառակն են։

ԲԻՒՐԵՂԱՑԱԾ — Քարացած
ԽԱՓՇԻԿ — Սեւ մորթով մարդ
ԼՈՒԾՈՒՈՂ ՄԱՐՄԻՆ — Այն բաները որ ջուրի մէջ կը հալին

1. Ինչո՞ւ մարդիկ աղ կը գործածեն։
2. Աղը միայն մարդո՞ց համար պէտք մըն է։
3. Ի՞նչ ըսել է անհրաժեշտ բան։
4. Ուրիշ ի՞նչ բաներ գիտէք որ նոյնպէս անհրաժեշտ են։



ԿՈՅՐԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ

Ցորեկ ատեն
Խարխափելէն
Չորս հատ կոյրեր, եկան դպան
Փիղի մը մեծ հսկայական ։
Մէկն որ մարմնին դպաւ ահեղ.
— Հէյ, ընգո՛ւշ, պոռաց, պատ մը կայ այստեղ։
Միւսն որ ոտքն էր շօշափեր իր դէմ՝
— Ի՞նչ պատ, կո՛ճղ է, կո՛ճղ, ըսաւ ժպտադէմ։
Երրորդին ձեռքը կընճիթն էր ինկեր .
— Օ՞ձ է, օ՛ձ, գոռաց, ա՛լ ինչ էք կեցեր ։
Մինչ չորրորդը որ պոչէն էր բռներ՝
Քա՛հ քահ խնդալով կը կրկնէր անհոգ .
— Իրա՛ւ որ կոյր էք, աղբա՛րներ խեւոք .
Ո՛չ աս է , ո՛չ ան , կախուած թոկ է , թոկ . . .

Եւ պռպռալով չորսն ալ մէկ բերան
Ինչպէս որ փիղին

Դէմն ելած էին,
Այնպէս ալ կոյր-կոյր կըրկին ետ դարձան ,
Եւ լեռան նման
Փիղը չը ճանչցան ։

ԽԱՐԽԱՓԵԼ — Կոյրերուն բան փնտռելը
ՀՍԿԱՅԱԿԱՆ — Շատ խոշոր
ԱՀԵՂ — Սոսկալի
ՇՕՇԱՓԵԼ — Ձեռքով բանի մը դպնալ, հասկնալ
ԿՈՃՂ — Ծառին բունը
ԺՊՏԱԴԷՄ — Խնդացող դէմքով
ԿՆՃԻԹ — Փիղին երկայն քիթը, որ ձեռքի պաշտօն կը կատարէ

1. *Առաջին կոյրը ինչո՞ւ պոռաց թէ «պատ մը կայ այստեղ»։*
2. *Երկրորդ կոյրը ինչո՞ւ «կոճղ է» ըսաւ։*
3. *Երրորդը ինչո՞ւ «օձ է» ըսաւ։*
4. *Չորրորդը ինչո՞ւ «կախուած թոկ է» պոռաց։*
5. *Կոյրերը քանի՞ բանի նմանցուցին մէկ փիղը։*
6. *Վերջը վերջը գիտցա՞ն թէ փիղ է։ Ինչո՞ւ։*

ՄԱՐԴՆ ՈՒ ԱՐՋԸ

1

Լեռնականին մէկը, որ շատ կը տըրտընջար մարդոց բարեկամութենէն, օր մը ըսաւ ինքնիրեն.

«Ծանօթներուս մէջ մէկը չի կայ որ վստահելի ըլլայ. մարդիկ ամէնքն ալ իրարու հետ թշնամութեամբ ու ատելութեամբ կապրին։ Գլուխս առնեմ ու ելլեմ երթամ այնպիսի տեղ մը, ուր մարդու երես չտեսնեմ. երթամ լեռնէ լեռ, սարէ սար ու ինծի հաւատարիմ բարեկամ մը գտնեմ։»

Մարդը այս որոշումը տուաւ ու միւս առաւօտուն, արևծագին, առաւ իր կինն ու զաւակները, և անհետացաւ խիտ անտառին մէջ։

Շատ գնաց, քիչ գնաց, հանդիպեցաւ մենաւոր արջի մը. բարի տուին, բարի առին, բարեկամացան իրարու հետ ու եղան եղբայր։ Ա՛լ ամէն օր միասին էին և չէին բաժնուեր իրարմէ։

Օր մը, երբ սեղանի էին նստեր, արջը ըսաւ լեռնականին.

— Եկո՛ւր, բարեկամ, համբուրեմ քու քաղցրախօս շրթունքներդ...

— Չէ, ա՛րջ եղբայր, շրթունքիս տեղ համբուրէ ճակատս, որովհետև շունչդ անուշ չհոտիր, պատասխանեց լեռնականը։

2

Արջը սաստիկ վշտացաւ, բայց երբեք յայտնի չըրաւ։ Երբ կերան, խմեցին ու բաժնուելու ատեն եկաւ, արջը դարձաւ լեռնականին ու ըսաւ.

— Սիրելի եղբայր ու թանկագին բարեկամ, եթէ կուզես որ մեր բարեկամութիւնը մնայուն ըլլայ, ա՛ռ սա կացինը և զա՛րկ գլխուս։

Մարդը զարմացաւ...։ Հրաժարեցաւ կատարելու իր բարեկամին այս տարօրինակ խնդիրքը։ Բայց արջը այնքան պնդեց, այնքան աղաչեց, որ մարդը ստիպուեցաւ վերցնել կացինը ու զօրաւոր հարուած մը տալ անոր գլխուն։ Արջը արիւնլուայ և գլուխը խորունկ ճեղքուած, անցաւ գնաց...

Միւս օրը մէկ նայիր որ արջը գայ, երկուք նայիր, ա՛լ ոչ եկող, ոչ ալ գացող։ Մարդը ելաւ իր բարեկամին որջը գնաց, հոս փնտռեց, հոն փնտռեց, անոր հետքն անգամ չգտաւ։

Անցան շաբաթներ ու ամիսներ։ Տարի մը ետքը, օր մըն ալ պատահումով իրարու հանդիպեցան ճամբան։ Լեռնականը շատ ուրախացաւ իր բարեկամը տեսնելով, ու ըսաւ անոր.

— Եղբա՛յր, այսպէս շո՞ւտ մոռցար մեր կերած

աղն ու հացը. տնաւէր, այ ծո՛ւր ես, մէջտեղ չի կաս. ի՞նչ պատահեցաւ քեզի, չէ՞ որ մենք բարեկամ ենք մէկմէկու...

Արջը պատասխանեց տխրութեամբ.

— Յանցաւորը ես չեմ. ես չգուաճանեցի անկեղծ բարեկամութեան... Պատճառը դուն քեզի հարցուր: Տես, գլխուս վրայ կացինին բացած ծանր վէրքը աղէկցաւ գնաց, բայց սրտիս մէջ քու լեզուիդ բացած վէրքը մինչև հիմա ալ արիւնահոս է։ Դարձիր գնա քու գիւղդ, մարդոց մէջ, միայն միտքդ պահէ թէ վատաբան լեզուէն աւելի մահառիթ զէնք չի կայ աշխարհիս մէջ...

ԼԵՌՆԱԿԱՆ — Լեռներու վրայ բնակող
ԽԻՏ — Ծառերը իրարու շատ մօտ
ԱՆՏԱՌ — Ընդարձակ տեղ՝ ծածկուած վայրի ծառերով
ՄԵՆԱՒՈՐ — Մինակ ապրող
ՔԱՂՑՐԱԽՕՍ — Անուշ խօսող
ՀԵՏՔ — Գետնին վրայ ոտքին թողած նշանները
ՊԱՏԱՀՈՒՄՈՎ — Դիպուածով
ԴԱՒԱՃԱՆԵԼ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ — Բարեկամութեան դէմ թշնամութիւն ընել, բարեկամութեան հակառակ գործել
ԱՐԻՒՆԱՀՈՍ — Արիւն հոսող
ՎԱՏԱԲԱՆ — Չար խօսող, գէշ խօսող
ՄԱՀԱՌԻԹ — Մահ պատճառող

1. Լեռնականը ինչո՞ւ ելաւ անտառը գնաց։
2. Անտառին մէջ որո՞ւ հետ բարեկամացաւ։
3. Ի՞նչ բանի համար արջը բաժնուեցաւ մարդէն։
4. Լեռնականին թերութիւնը ի՞նչ էր և արջը ի՞նչ խրատ տուաւ անոր։

ՕՁԵՐԸ

Օձերը ոչ ձեռք և ոչ ալ ոտք ունին. բայց, կրնան շատ արագ քալել, սողալով իրենց փորին վրայ և գալարելով իրենց մարմինը: Այս պատճառով ալ անոնք կը կոչուին սողուն, այսինքն սողացող։

Օձին մարմինը խիստ դիւրաթեք, ճկուն է. ծածկուած է մորթով մը՝ որ թեփուկներէ կազմուած է։ Այս մորթը խորխ կը կոչուի և ատեն ատեն իր վրայէն կեղուըուելով կելլէ։

Օձերը երկու տեսակ են, թունաւոր և անթոյն։

Մեր երկրին թունաւոր օձերը իժ կը կոչուին. բայց ամէնէն աւելի զարհուրելի թունաւորները կը գտնուին տաք երկիրներու մէջ և կը կոչուին բոժոժաւոր օձ։

Լորտուն, որ անթոյն օձն է, շատ կը գտնուի մեր դաշտերուն մէջ և աղբիւրներուն քով: Անիկա վնասակար չէ. ընդհակառակը, շատ երկչոտ է և աղմուկ մը լսածին պէս կը փախչի։ Երբ վախնայ, կը սկսի փշալ։ Տատերը կը կար-

ծեն թէ այդպէս ֆշալով, անիկա սպառնալիք կընէ. այդպէս չէ. այդ անախորժ ձայնով՝ իր վախն է որ կարտայայտէ։

Իժը, ինչպէս բոլոր թունաւոր օձերը՝ ունին եռանկիւնաձև գլուխ։ Իժը մոխրագոյն է և շատ անգամ կը նմանի սեւցած փայտի ճիւղի մը. երբ մարդ սխալելով վրան կոխէ, իր բանը բուսած է։ Անմիջապէս կը խածնէ կատաղութեամբ և իր թոյնը մահացու է, եթէ իսկոյն դարման չտարուի։ Թոյնը կը գտնուի օձին աչքերուն տակի կողմը։ Օձին ակռաները ծակ են. երբ կը խածնէ՝ թոյնը կը հոսի ակռային ծակէն և կը թափի վէրքին մէջ։

Իժը կը գտնուի ընդհանրապէս քարոտ և արևոտ տեղեր։

ԳԱԼԱՐԵԼ — Օղակ օղակ գալ, կակուղ բան մը ամէն կողմ դարձնել
ԴԻՒՐԱԹԵՔ — Դիւրութեամբ ծռող
ՃԿՈՒՆ — Դիւրութեամբ ծռող
ԽՈՐԽ — Օձի շապիկ
ՍՊԱՌՆԱԼԻՔ — Զարհիք ընելու վախ տալ
ԿԱՐՏԱՅԱՅՏԷ — Կը յայտնէ
ԵՌԱՆԿԻՒՆԱՁԵՒ — Երեք անկիւն ունեցող

1. Բոլոր օձերը թունաւո՞ր են։
2. Ի՞նչ է իժը և ի՞նչպէս պէտք է ճանչնալ զայն։
3. Ո՞ւր կը գտնուի իժին թոյնը և ինչպէ՞ս կը թափի վէրքի մէջ։

ՑՈՐԵՆԻ ՀԱՏԻԿԸ

1

Դեկտեմբերի մէջ էր։ Ծառերը սառեր էին և տխրութեամբ վեր կը բարձրացնէին իրենց հազարաւոր չոր ճիւղերը։ Երկինքը դարձեր էր կապարագոյն և ձիւնը կու գա՛ր, կու գա՛ր անհատնում ու կը ծածկէր գետինը։

Փոքր աղջիկ մը դուրս ելաւ հիւղակի մը դռնէն և դպրոց կերթար։

Ամէն առաւօտ կը քալէր նոյն ուղիէն, որ կերկարի դաշտին մէջէն։

Փոքրիկ աղջիկը կը քալէր դժուարութեամբ ու սրտնեղութեամբ. ցուրտէն կը մսէին ձեռքերը և կարմրեր էին երեսները. հազիւ թևին տակ կը պահէր իր դասագրքերը և ձիւնը կը ճարճատէր ոտքերուն տակ։

— Ճամբան երկար է և շատ դժուար, կըսէր ինքնիրեն։ Քանի՛ անգամ տակաւին պիտի անցնիմ դառնամ ասկէ։ Ո՞ւր է արևը. ո՞ւր են ծաղիկները. ե՞րբ պիտի գայ գարունը։

Եւ խեղճ աղջիկը կը քալէր դժգոհ ու տրտում։ Արցունքի կաթիլ մը կախուեցաւ իր թարթիչներէն։

Բայց ահա կարծես ձայն մը կու գայ ականջին. զարմանալի՜ բան։ Կը ծռի և մտիկ կընէ։

Ձայնը գետնէն կու գայ, թեթև, քաղցր,

երգի պէս ներդաշնակ, և կլսէ.

Ցուրտ է, ցուրտ է հողին տակ,
Բայց պիտի գայ արեգակ.
Պիտի գան տօն ու Զատիկ,
Տաքուկ օրեր ու ծաղիկ.
Լըսէ ինծի, ո՜վ աղջիկ։
Ցուրտ է, ցուրտ է հողին տակ,
Բայց ես չեմ լար գըլխահակ.
Կերգեմ ուրախ, կըսպասեմ,
Որովհետև լաւ գիտեմ՝
Պիտի գան տօն ու Զատիկ,
Արև օրեր ու ծաղիկ.
Հաւտա՛ ինծի, ո՜վ աղջիկ։

2

Աղջիկը խոշոր խոշոր կը բանայ աչքերն ու ականջները. չի համարձակիր առաջ երթալ։

Վերջապէս կը հարցնէ.

— Ո՞վ ես դուն։

— Ցորենի հատիկ, կը պատասխանէ թեթև, անուշ և քնքուշ ձայնը։

— Ի՞նչ կընես հոս։

— Երկու ամիս է որ երկրագործին ձեռքը ձգեց զիս այս ծակին մէջ և կը կենամ այս մութ տեղը։

— Դուն չի լացե՞ր բնաւ։

— Երբե՛ք։

— Հիմա ալ չե՞ս ուզեր որ լաս ինծի հետ։

— Ո՛չ։ Դո՛ւն սորվի՛ր ինծմէ թէ պէտք է նեղութիւններուն դիմանալ և համբերանք ունենալ, սիրո՛ւն աղջիկ։

— Համբերա՛նք. ծրմէ առնեմ զայն։

— Փնտռէ՛ քու մէջդ և պիտի գտնես։

Եւ ցորենի հատիկը նորէն սկսաւ երգել իր երգը։ Այդ երգին մէջ ըսաւ թէ ահա դպրոցին զանգակը կը հնչէ, շուտով դասերը պիտի սկսին, պէտք է աճապարել և ետ չմնալ։

Աղջիկը ինք ալ կը լսէ զանգակին ձայնը. կը սրբէ արցունքը, կ՚աճապարէ դէպի դպրոց։

Ուրախութիւն մը կը զգայ և տխրութիւնն ու յուսահատութիւնը կը փարատին։ Կերգէ ինք ալ ցորենի հատիկին երգը։

3

Ձմեռը շուտ անցաւ. ահա կարմիր արևը կը փայլի, ցորենի հասկերը կանչցեր են. եկած է Զատիկը, թռչունները կը ճռուողեն ու թիթեռնիկները զւարթ կը հալածեն թուփերուն վրայ։

Գարուն է։ Ցորենի հատիկը դուրս ելած է հողին տակէն. այլևս մութ տեղը փակուած տըժգոյն բանտարկեալը չէ, այլ հպարտ ցօղուն մը, որ վեր կը բարձրանայ ու կընդունի արևին քաղցր փայփայանքը։ Աղջիկը կը ճանչնայ

գայն, կը ժպտի անոր և կրսէ․

— Որքա՜ն իրաւունք ունիս եղեր, կանաչ ցորեն․ համբերանքը կեանք է։

ԿԱՊԱՐԱԳՈՅՆ — Արճիճի գոյն
ՀԻՒՂԱԿ — Աղքատի խեղճուկ տուն
ՈՒՂԻ — Ճամբայ
ԿԸ ՃԱՐՃԱՏԷՐ — Ջրք չրք կըլլար
ՆԵՐԴԱՇՆԱԿ — Քաղցր, անուշ
ԳԼԽԱՀԱԿ — Գլուխը ծռած
ՔՆՔՈՒՇ — Փափուկ
ԿԸ ՓԱՐԱՏԻՆ — Կանցնին

1. *Որո՞նք են ձմեռուան ամիսները։*
2. *Դեկտեմբերին մէջ ի՞նչպէ՞ս կ'ըլլան ծառերը, երկինքը և ճամբաները։*
3. *Ինչո՞ւ տխուր էր փոքրիկ աղջիկը և ի՞նչ բանի դէմ կը գանգատէր։*
4. *Ի՞նչ երգեց ցորենի հատիկը և ի՞նչ ըսաւ փոքրիկ աղջկան։*
5. *Ինչո՞ւ համբերանքը կեանք է, կ'ըսեն։*

ԱԾՈՒԽ ԵՒ ՀԱՆՔԱԾՈՒԽ

Անշուշտ ամէնքդ ալ գիտէք թէ հասարակ ածուխը փայտէն կը շինեն։ Ածխագործները կերթան անտառ, կը կտրեն վայրի ծառերը, զանոնք կը լեցնեն մեծ փոսի մը մէջ, կրակ կու տան և անմիջապէս կը ծածկեն հողով։ Փայտերը հողին տակ մնալով կը վառին և կը դառնան ածուխ։ Եթէ հողով ծածկուած չըլլային, պիտի վառէին և մոխիրի պիտի վերածուէին։

Բայց, հասարակ ածուխէն զատ, կայ նաև հանքածուխը, որ քարի պէս է և մարդիկ գետինը փորելով, անոր տակէն կը հանեն։

Հանքածուխին կրակը շատ աւելի զօրաւոր է փայտի ածուխին կրակէն։ Այս պատճառով գործարաններու և շոգեկառքին մէջ հանքածուխ կը գործածեն․ որովհետև, մեծ մեքենաները և երկաթուղին շարժելու համար, անհրաժեշտ է ունենալ զօրաւոր տաքութիւն։

Մեր երկրին մէջ ալ շատ տեղեր հանքածուխ կը գտնուի, բայց դեռ կը մնայ հողին տակ։ Պոլիս, Իզմիր և ծովեզերեայ քաղաքներուն մէջ հանքածուխ կը ծախուի, իսկ Հայաստանի մէջ միմիայն փայտէ ածուխն է որ կը գործածուի։

Փայտը, ածուխը և հանքածուխը մեզի տաքութիւն կու տան։ Եթէ անոնք չըլլային, ի՞նչպէս կերակուր պիտի եփէինք, ի՞նչպէս ձմեռը

պիտի տաքցնէինք մեր տուները։ Եթէ փայտը և ածուխը չըլլային, ի՛նչպէս երկաթագործը խոփ, մանգաղ և երկաթէ գործիքներ պիտի շինէր. մէկ խօսքով, առանց տաքութեան, ի՛նչպէս պիտի ունենայինք հազարաւոր պիտանի ու օգտակար առարկաներ։

Ո՛չ, առանց փայտի, առանց ածուխի և հանքածուխի, մենք շատ թշուառ ու խղճալի պիտի ըլլայինք։

ԱԾԽԱԳՈՐԾ — Ածուխ շինող
ՊԻՏԻ ՎԵՐԱԾՈՒԷԻՆ — Պիտի դառնային, պիտի ըլլային
ԾՈՎԵԶԵՐԵԱՅ — Ծովուն եզերքը կամ մօտիկը գտնուող
ՊԻՏԱՆԻ — Պէտք եղող

1. *Ի՛նչպէս կը շինեն փայտէ ածուխը։*
2. *Ի՞նչ է հանքածուխը և ո՞ւրկէ կը գտնեն մարդիկ։*
3. *Հասա՞րակ ածուխին թէ հանքածուխին տաքութիւնը զօրաւոր է։*
4. *Ի՞նչ բաներու մէջ կը գործածուի հանքածուխը։*
5. *Ի՞նչ բաներ պիտի չունենայինք՝ եթէ փայտը, ածուխը և հանքածուխը չըլլային։*
6. *Ուրեմն ի՞նչ տեսակ առարկաներ են փայտը, ածուխը և հանքածուխը։*

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՏՈՒՆ

Այնտեղ ուր հովը կը խաղայ ազատ
Ու գետն աղմուկով կերթայ, կանգ չառներ,
Այն տեղ իր բարի մօր հետ խանդակաթ
Անհանգիստ ու խենթ տըղայ մը կապրէր՝
Մութ խըրճիթի մէջ,
Հին խըրճիթի մէջ՝
Գետին եզերքը,
Ծառերուն տակը։



Օր մըն ալ յանկարծ
անհանգիստ տըղան
Ըսաւ իր բարի մօրը
խանդակաթ.
— Ո՛չ, մայրիկ, կերթամ ես օտարութեան.
«Աշխարհիս միակ
տեղը գէշ ու վատ
«Այս մութ խըրճիթն է
«Այս հին խըրճիթն է՝
«Գետին եզերքը,
«Ծառերուն տակը։

«Թո՛ղ, երթամ, շըրջիմ աշխարհէ աշխարհ,
«Ճամբորդեմ՝ լաւ լաւ տեղեր տեսնելու,
«Ամէնէն լաւը ընտրեմ մեզ համար,
«Գամ քեզ ալ առնեմ ու փախչինք հեռու՝
«Այս մութ խըրճիթէն,

«Այս հին խրճիթէն՝
«Գետին եզերքը,
«Ծառերուն տակը» ։

Ու Գընաց, անցաւ երկրիս հինգ մասեր,
Տեսաւ շատ տուներ մեծ ու հոյակերտ,
Բայց միշտ ամէն տեղ բան մը պակաս էր...։
Եւ հառաչելով վերադարձաւ ետ՝
Այն մութ խրճիթը,
Այն հին խրճիթը՝
Գետին եզերքը,
Ծառերուն տակը ։

Մայրիկը հարցուց. «զաւա՛կս, գըտա՞ր»,
Աչքը ձըգելով իր տըղուն վրայ.
— Շըջեցայ, մա՛յրիկ, աշխարհէ աշխարհ,
«Բայց ամէնէն լաւ, քաղցր որ տուն կայ՝
«Այս մութ խրճիթն է,
«Այս հին խրճիթն է՝
«Գետին եզերքը,
«Ծառերուն տակը։

ԿԸ ԽԱՂԱՅ — Կը շարժի
ԽԱՆԴԱԿԱԹ — Սիրտը լեցուած սիրով, տաք սրտով
ԽՐՃԻԹ — Աղքատիկ տուն
ՀՈՅԱԿԵՐՏ — Փառաւոր կերպով շինուած
ՀԱՌԱՉԵԼՈՎ — Ախ քաշելով

1. Ինչո՞ւ օտարութեան գնաց տղան։
2. Որո՞նք են աշխարհի հինգ մասերը։
3. Ինչո՞ւ նորէն տղան ետ վերադարձաւ. ի՞նչ ըսաւ իր մօրը։
4. Ի՞նչ ըսել է հայրենական տուն։

Ի՞ՆՉ ԿԱՅ, Ի՞ՆՉ ԿԱՅ

1



Բադերը կը լոգնային տղմուտ ջուրին մէջ. կը լոգնային ու կը կռկռային ։

— Ը՜, կը լսե՞ս, աս ի՞նչ ձայն է, հարցուց անոնցմէ մէկը իր ընկերոջ ։

— Զարմա՛նք. այսքան խոշոր ձայն լսուած չէր այս ճահիճին մէջ. անպատճառ մեծ բան մը պատահած է, ըսաւ միւսը ։ Երթանք անգամ մը տեսնենք ։

Ու երկու խելոք բադերը կռկռալէն կռկռալէն, աճապարանքով սկսան լողալ առուն ի վար։

Միւսները որ տեսան իրենց ընկերներուն լողալը, խորհեցան թէ անշուշտ առատ ճճիներ գտած են, ուստի խումբով սկսան իրենք ալ վազել անոնց ետեւէն ։

2

Եւ ահա վայնասուն մըն է փրթաւ առուին վրայ. կռկռո՜ւք, իրարանցո՜ւմ, աղմո՜ւկ։

Ծեր բադ մը անոնց դէմ ելաւ.

— Ճանը՛մ, ըսաւ, բան չի կայ, բան չէ պատահեր, եղածը սա է որ ծառին մէկ ճիւղը կոտրելով առուին մէջ է ինկեր ։

Լսո՞ղը ով. մէկը հարցում կընէ, հազարը պա-

տասխան կու տայ․ կը շաղակրատէն, կը պոռան, իրար կը հրեն ու կը լողան․ կարծես թէ երկինքէն լուսնկան փրթեր ու առուին մէջ է ինկեր։

3

Կուռթ մը իր տասը ձագերը ետին ձգած,

առտուան պտոյտը կընէր․ լսեց բադերուն աղմուկը և տեսաւ անոնց արագ արագ լողալը առուն ի վար․ զարմանքէն աչքերը խոշոր խոշոր բացած, կանգ առաւ։

— Դուք հանդարտ մը կայնեցէք սա պատին ետև, երթամ տեսնեմ թէ ինչ է պատահեր, ըսաւ իր ձագերուն․ չըլլայ թէ կտկտաք, չըլլայ թէ ձեր տեղէն շարժիք մինչև որ գամ։

4

Հովիւին գամբռը, որ քիչ մը հեռուն, արեւին տակ կը քնանար, ինք

ալ յանկարծ արթնցաւ աղմուկէն։ Ոտքի ելաւ, թոթուըռտուեցաւ, ականջները տնկեց, մէյ մը հաչեց դէպի առուին կողմը և նետի մը պէս թռաւ այն ուղղութեամբ։

Շանը վազելը տեսնելով, Գզիրին կովն ալ գլուխը խոտէն վեր առաւ․

«շունը անշուշտ բան մը գտէ որ կը վազէ» ըսելով՝ սկսաւ ինք ալ ոտքերը վերցնել․ հեռուէն լսեց որ Քէհեային ձին կը հարցնէ շանը․

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ։

— Չեմ գիտեր, պատասխանեց շունը․ չե՞ս լսեր աղմուկը․ երթամ տեսնեմ թէ ինչ է պատահեր։

Ձին մօտեցաւ արօտի



ցանկապատին․ նայեցաւ դէպի առուին կողմը, բայց ծերացած, յոգնած, քիչ մըն ալ ականջները խուլ ըլլալուն՝ «բա՛ն չունիս, ինչ կուզէ ան թող ըլլայ» ըսելով, տեղէն չշարժեցաւ ու սկսաւ նորէն արածիլ։

5

— Լսեցէք, լսեցէք, պոռաց անծեղ մը մօտիկ ծառին վրայէն իր ընկերներուն։

— Ի՞նչ կայ որ, հարցուցին ընկերները խռոված։

— Չէ՞ք լսեր, աղմո՛ւկ, իրարանցում․ անպատճառ կռիւ ըլլալու է։ Տեսայ որ գամբռը

բոլոր ուժով կը վազէր, Գզիրին կարմիր, պառաւ կովն ալ, շունչը կտրած, անոր ետեւէն. ու դեռ ուրիշներ ալ. ամէնքն ալ այն կողմը կերթան ։

— Կռա՜, կռա՜. մենք ալ երթանք, աղաղակեցին անծեղները. չէ՛, կենալ չըլլար, ետ մնալու չի գար ։

Եւ ահա անծեղները կայծակի պէս թռան ու ակնթարթի մը մէջ թառեցան առուին եզերքի ուռենիներուն վրայ ։

6

Զարմանալի՜ բան, ըսաւ ճնճղուկին մէկը. բոլոր ագռաւները գացին հաւաքուեցան սա վարի կողմը. մեծ բան մը պատահած ըլլալու է. երթանք տեսնենք թէ ինչ կայ ։

Ճնճղուկն է թռաւ. Թռաւ թէ չէ՝ իր հազարաւոր ընկերներն ալ, որ վանքին պարտէզը գողութեան մտած էին, ձգեցին պտուղները և վազեցին, ամպի պէս, իրենց ընկերոջ ետեւէն ։

7

— Ի՞նչ իրարցում է աս, ըսաւ ծերուկ

Սերմնացան

բուխճակ մը։ Խնդիր մը կանցնի կը դառնայ՝ որ չեմ հասկնար։ Չէ, աղէկ բան չերևնար ինծի. եկէք հաւաքուինք ու մեր գլխուն ճարը նայինք։

Ու բոլոր բուերը եկան, կարգով շարուեցան Վանքին զանգակատան մէջ։

— Զարդի պէս բան մը ըլլալու է, ըսաւ մէկը։

— Չէ, կրկնեց միւսը, բանակ մը որմնադիր է, որ կու գայ Վանքին աւերակները շինելու. շուտ, բոյներուն ճարը։

8

Բայց, ճիշտ այն պահուն որ հովիւին գամբռը առուին եզերքը կը հասնէր, արդէն երկու բադերը ետ կը դառնային և իրենց ընկերներուն յայտներ էին աղմուկին պատճառը։

Ծառին մէկ ճիւղը կտրեր և ջուրին մէջ էր ինկեր։

Ու բադերը ձայներնին կտրած, խումբով կը վերադառնային դէպի ճահիճը։

— Ի՞նչ էր պատահեր, կը հարցնէ գամբռը խումբին ետևը մնացած վերջին բադին։

— Բան չի կա՛յ, բան չի՛ կայ, կը պատասխանէ բադը։

— Հապա ի՞նչ էր այս բոլոր աղմուկին պատճառը։

— Ոչի՛նչ բանի համար։

— Ոչի՛նչ բան, կը կրկնէ կուռթը՝ դառնալով իր ձագերուն մօտ։

— Ոչի՛նչ բանի մը համար, կըսէ շունը՝ սիրտը սաստիկ նեղացած որ պարապ տեղը քըրտինքի մէջ մտաւ։

— Ըսաւ թէ ոչինչ բան է եղեր, այնպէս չէ՞, գոմբու եղբայր, կը հարցնէ ծերուկ կովը, սկսելով նորէն արածիլ։

— Ի՞նչ կար որ, անոնց կը պոռայ ձին, ցանկապատին վրայէն վիզը երկնցնելով։ Բան չի կա՛յ եղեր․ աղէկ որ պարապ տեղը անհանգիստ չըրի ես զիս։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, կը ճչան ճնճղուկները։ Ի՛նչ խայտառակութիւն․ այսքան մարդիկ հաւաքուեցան պարապ աղմուկի մը երեսէն։

Ու կը թռին դարձեալ Վանքին պարտէզը և կիջնեն տանձենիներուն վրայ։

— Եղածը ան է որ բան չի կայ եղեր, կը պոռան նոյնպէս անծեղները։

— Բա՛ն չի կայ, կըսեն բուիճակները։ Բայց, կը վայե՞լէր պարապ բանի համար այսքան աղմուկ հանել․ ամօ՛թ, ամօ՛թ։ Ոստիկան չի կա՛յ, ի՞նչ է, այս երկրի՛ն մէջ...

Իսկ այս ամբողջ իրարանցումէն մինակ կատու մը գոհ էր մնացեր, որովհետև, օգտուելով

կուռթին բացակայութենէն, անուշ էր ըրած անոր ձագուկներէն երկու հատը։

ՏՂՄՈՒՏ — Աղտոտ, ցեխոտ

ՃԱՀԻՃ — Ցեխոտ տեղ մը ուր ջուրը կը հաւաքուի, կը կենայ եւ կը հոտի

ՎԱՅՆԱՍՈՒՆ — Մեծ աղմուկ, լացի կոծի ձայն

ԿԸ ՇԱՂԱԿՐԱՏԵՆ — Շատախօսութիւն կընեն

ԳԱՄԲՌ — Հովիւի խոշոր շուն

ԽՌՈՎԱԾ — Սրտերնին դող ելած

ԲՈՒԻՃԱԿ — Փոքր բու

ՈՐՄՆԱԴԻՐ — Պատ շինող (պէննան)

ՕՐԷՆՔԻ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Ձեզի շատ հետաքրքիր պատմութիւն մը պիտի ընեմ։

Իսլանտա անունով կղզի մը կայ։ Բայց, գիտէ՞ք թէ ինչ ըսել է կղզի։ Եթէ չէք գիտեր, թող ձեր ուսուցիչը սորվեցնէ ձեզի թէ ինչ ըսել է կղզի։ Այս Իսլանտա կղզին շա՛տ, շա՛տ հեռու է մեր երկրէն և կը գտնուի Եւրոպայի հիւսիսային արևմտեան կողմը։

Ճամբորդ մը կը պատմէ թէ օր մը Իսլանտայի մէկ քաղաքէն միւսը կերթայի. ճամբան հանդիպեցայ մարդու մը, որ մայրաքաղաքը կերթար։ Հարցուցի իրեն թէ ինչ է անունդ։

Մարդը պատասխանեց.

— Անունս Ստեփան է։

— Ո՞ւր կերթաս այսպէս։

— Բանտ կերթամ։

— Ինչո՞ւ։

— Անոր համար որ այծի գողութիւն ըրի և բռնուեցայ։

— Հապա ինչպէս է որ հետդ ոչ ոստիկան կայ, ոչ զինուոր։

— Դատաւորը շատ զբաղած էր, այս պատճառով բանտարկութեան հրամանագիրը ինծի տուաւ և մինակ խրկեց զիս։

Այսպէս, իրարու հետ խօսելով՝ ճամբորդն ու դատապարտեալ յանցաւորը բաւական տեղ միասին գացին ու ապա բաժնուեցան. ամէն մէկը գնաց իր գործին։

Անցաւ չորս օր։ Ճամբորդը ետ կը դառնար, երբ նոյն ճամբուն վրայ դարձեալ հանդիպեցաւ Ստեփանին, որ նոյնպէս ետ կը դառնար։

— Հապա դուն ետ կը դառնաս, Ստեփան, հարցուց ճամբորդը զարմացած։ Չէ՞ որ դուն կըսէիր թէ բանտ կերթաս։

— Այո, ես սխալ չըսի. գացի բանտ, բայց զիս ներս չառին։

— Ինչո՞ւ։

— Ճամբան յանկարծ քովէս ինկած կորսուած էր բանտարկութեան հրամանագիրս. անոր համար բանտապետը ըսաւ թէ մինչև որ հրամանագիր չբերես, քեզ ներս չեմ առներ։

— Այն ատեն, մինչև հիմա ինչո՞ւ սպասեցիր և տուն չդարձար. չէ՞ որ քեզ հարցնող փնտռող պիտի չըլլար։

Բայց Ստեփանին խօսքերէն երևցաւ որ մէկ քանի օր աստին անդին փնտռած է իր կորսնցուցած հրամանագիրը, որպէսզի կարող ըլլայ բանտին դռները բանալ տալ ու ներս մտնել. Թուղթը չէ գտած և հիմա ետ կը դառնայ, որ նոր մը առնէ։

Ահա թէ ինչպէս կան երկիրներ, որոնց բնակիչները կամովին կը հնազանդին տեղական արդար օրէնքներուն։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ — Այն քաղաքը՝ որուն մէջ կը նստի երկրին թագաւորը կամ իշխանը
ՈՍՏԻԿԱՆ — Այն պաշտօնեան, որ կը հսկէ քաղաքացիներու հանգստութեան վրայ եւ յանցաւորներ դատարանի կը յանձնէ
ԴԱՏԱՒՈՐ — Այն պաշտօնեան, որ մարդոց դատերը կը տեսնէ եւ յանցաւորներուն պատիժ կու տայ օրէնքով
ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ — Յանցաւոր մը որ դատարանին կողմէ պատիժի ենթարկուած է
ԲԱՆՏԱՊԵՏ — Այն մարդը որ բանտին հսկողութիւնը առած է
ԿԱՄՈՎԻՆ — Յօժար կամքով

Ուսուցիչէն կը խնդրենք տարրական ծանօթութիւն տալ դատարանի և օրէնքի վրայ։

ԿԱՂԱՆԴԻՆ ՕՐԸ

Կաղանդ պապան եկաւ և ինչե՜ր, ինչե՜ր բերաւ Տիգրանիկին։ Հայրիկը, հօրքոյրը, մեծմայրը, մօրաքոյրը, մայրիկը՝ ամէնքն ալ, ազուոր ազուոր կաղանդչէքներ տուին անոր։

Տիգրանիկը այնչափ նուէրներ ունի որ չգիտեր թէ ո՛ր մէկին նայի, ո՛ր մէկին հետ խաղայ։ Մեծ-մայրիկը չամիչ, պաստեղ ու ռոճիկ տուեր է. մօրաքոյրը՝ փայտէ ձի մը, ճերմակ ստեւով և ճերմակ թամբով. հօրքոյրը՝ պատկերազարդ գիրք մը. մօրաքոյրը՝ կապոյտ աչքերով, դեղձան մազերով տիկին մը։

Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն ուրախ է Տիգրանիկ։ Նստեր է սեղանին առջև, անոր վրայ շարեր է իր նուէրները և կը խաղայ։ Բոլորն ալ իրենն են, մինակ իրենը։

Ահա իր պատուհանին տակէն կանցնի դրացիենց Մանուկը։ Մանուկը կաղանդչէք չունի. անոր մայրիկը մեռած է և հայրիկն ալ աղքատ է։

Մանուկ պատուհանէն ներս կը նայի և ըսքանչացումով կը դիտէ Տիգրանիկին նուէրները. Տիգրանիկ հպարտութեամբ, մէկիկ մէկիկ կը հանէ իր խաղալիկները։ Կը ցուցնէ իր պաստեղն ու չամիչը, իր փայտէ ձին ու տիկինը. կը ցուցնէ ու մտքէն կըսէ. «Մանուկը թող տեսնէ թէ ես ինչքան գեղեցիկ բաներ ունիմ»։

Բայց, բարեբախտաբար Տիգրանիկին մայրիկը հոն է և կամացուկ մը կըսէ իր զաւկին.

— Իմ անուշիկ տղաս, տե՛ս, Մանուկը կաղանդչէք չունի. բարի տղաքը պէտք է որ ուրախացնեն իրենց ընկերները։ Դուն ալ բարի եղիր, և խաղալիկներէդ մէկը տուր Մանուկին։

Տիգրանիկ, առաջին անգամ, կը վարանի. բայց իր սիրտը շատ բարի է։ Երբ կը տեսնէ որ մայրիկը չամիչ ու նուշ կը լեցնէ Մանուկին գրպանները, ինք ալ կառնէ իր սիրուն խաղալիկներէն մէկը, իր տիկինը, և ազնիւ շարժումով մը կերկնցնէ Մանուկին։

ՍՏԵՒ — Կենդանիներուն վրայի մազը
ԹԱՄԲ — Կաշիէ շինուած այն բանը որ ձիուն, իշուն եւ ջորիին կռնակին կը դնեն, անոր վրայ նստելու համար
ԴԵՂՁԱՆ — Դեղին
ՍՔԱՆՉԱՑՈՒՄ — Մեծ զարմանք
ՎԱՐԱՆԻԼ — Բան մը անմիջապէս չընել

1. Ի՞նչ ըրաւ Տիգրանիկ Մանուկին։
2. Ի՞նչ պէտք է ընեն բարի մանուկները։

ԱՅՈ ԵՒ ՈՉ

Այոն պզտիկ աշխուժ աղջիկ մըն էր, աչքերը ժպտուն, շրթունքները ժպտուն, քիթը դողդոջուն։

Երբ մայրիկը կըսէր․ «երեսդ լուա՛, զգեստներդ մաքրէ», աղջիկը իսկոյն կը պատասխանէր․

— Այո՛, այո՛, մայրիկ։

Անոր երեսը միշտ մաքուր էր, մազերը սանտըրուած, զգեստները առանց կեղտի։

Ոչը պզտիկ դանդաղ տղայ մըն էր, յօնքերը կախ, աչքերը մռայլ և շրթունքները ուռած։

Երբ մայրիկը կըսէր․ «երեսդ լուա՛, զգեստներդ մաքրէ», տղան կը պատասխանէր․

— Ո՛չ, չեմ ուզեր, ո՛չ։

Անոր երեսն ալ մրոտ էր, մազերն ալ խառն ի խուռն, լաթերն ալ փոշոտ։

Երբ մայրիկը կըսէր Այոին․ «Գնա՛, թաշկինակս բեր», աղջիկը կը կանչէր․ «Այո՛, մայրիկ, հիմա՛»։ Եւ կը վազէր, կը բերէր թաշկինակը։

Ոչը երբեք մեծերուն խօսքը չէր կատարեր։ Երբ հայրիկը կըսէր․ «գնա՛, ջուր մը բեր», անիկա ուսը վեր կը քաշէր և կը մրթմրթար․ «Ո՛չ, չեմ երթար, ո՛չ»։

Ճաշի ժամանակ երբ մայրիկը կըսէր Այոին՝ «անձեռոցը վրադ կապէ, նստիր կերակուրդ

կե՛ր», աղջիկը կըսէր․ «Այո՛, այո՛, մայրիկ․ ա՜խ, աս ի՜նչ լաւ կերակուր է»։

Իսկ երբ Ոչին կըսէին «անձեռոցդ կապէ, կերակուրդ կե՛ր», կոշտ ու կոպիտ կը պոռար․ «Ո՛չ, չեմ կապեր։ Իօֆ, աս ի՜նչ գէշ կերակուր է»։

Երբ կը մթնէր ու մայրիկը ձայն կու տար Այոին, «ժամանակ է, լաթերդ հանէ ու պառկէ», աղջիկը իսկոյն ոտքի կելլէր ու կըսէր․ «Այո՛, այո՛, երթամ պառկիմ։ Բարի՜ գիշեր, հայրի՛կ․ բարի՜ գիշեր, մայրի՛կ»։

Իսկ Ոչը երբեք առանց լացի չէր երթար քնանալու․ ոտքերը գետին կը զարնէր, կը յամառէր․ «Ո՛չ, չեմ պառկիր․ ո՛չ, չեմ քնանար»։ Ու կու լա՜ր, կը պոռար․ զօրով կը հանէին լաթերը ու կը պառկեցնէին։

Ու երբ Ոչը տեղ մը հիւր երթար ու դուռը զարնէր, զինք տեսնելով, ներսէն կը պատասխանէին․ «Ո՛չ, ո՛չ, այսօր մենք գործ ունինք» և շուտով դուռը կը փակէին երեսին։

Իսկ երբ Այոն ըլլար դուռը ծեծողը, անմիջապէս կը բանային, դէմը կը վազէին, «Օ՜, բարի՜ եկար, բարի՜ եկար, հրամմէ՛, հրամմէ՛» ըսելով ներս կը տանէին։

ԻՍԿՈՅՆ — Անմիջապէս
ՄՌԱՅԼ — Տխուր
ԱՆՁԵՌՆՈՑ — Սրբուելիք լաթ (*փէշքիր*)
ԿԸ ՅԱՄԱՌԷՐ — խօսք մտիկ չէր ըներ, ըսածին վրայ կը պնդէր

ԺԱՆՏԱԽՏԸ

1

Գազաններուն մէջ ժանտախտ էր,
Զըմեռնելը շատ մեծ բախտ էր։
Ծըգնաժամ էր օրհասական,
Ուստի պոռաց առիւծ արքան.
— «Կենդանիներ ինչքան որ կան
«Թող հաւաքուին, գահիս մօտ գան.
«Ըսենք, խօսինք, գիրար լըսենք,
«Զարդըրուեցանք, ճար մը գըտնենք» ։

Ճ, արքայի հըրաման էր,
Ժանտախտի պէս բան մ'ալ ան էր։

Սարսուռ ինկաւ դաշտ ու անտառ,
Կենդանիներ լեղապատառ
Եւ շըփնչասպառ ու վազնէվազ,
Մեծ ու փոքր, բազմատարազ՝
Արջ ու յովազ, վագր ու վարազ,
Զար բորենի, աղուէս ու գայլ,
Մեր էշն անգամ վըսեմափայլ
Եկան կեցան առիւծին դէմ։

2

Արքան գոչեց. «Ես ձեզ հետ եմ,
«Մեծ իշխաններ, ես լաւ գիտեմ
«Որ ձեր սըրտէն արիւն կերթայ։
«Եթէ բանը այսպէս մընայ,
«Այս ժանտախտին ակռանջը խուլ,
«Ամբողջ ցեղով մենք կերթանք կուլ ։
«Եղբայրներս լուռ ու տըրտում,
«Ո՞ր մեղքէն է որ այս ցասում
«Տէրն է ճամբեր մեր խեղճ ցեղին,
«Մեղաւորին թէ անմեղին ։
«Աշխարհք բըռնեց ցեղիս լացը,
«Մէկտեղ կայրին չորն ու թացը ։
«Եկէք, խնդրեմ, անկեղծօրէն
«Խոստովանինք, ո՛րս անօրէն
«Բան ենք բըռներ, մեծ մեղք գործեր
«Որ վերն Աստուած է բարկացեր ։
«Հէնց ես որ ձեր գըլխաւորն եմ,
«Ձեր ամէնէն մեղաւորն եմ.

«Քանի՜ անմեղ գառ ու ոչխար
«Ուղարկեր եմ իմ մութ աշխարհ,
«Եւ հովիւն ալ լեղապատառ
«Դեռ ըրած եմ երկու պատառ։
«Աս իմ մեղքս է, չեմ ծածկեր ես,
«Որ բերեր է ցասում այսպէս»։



3

Մեղքերն ըսին արջ ու յովազ,
Զար բորենին, վագր ու վարազ,
Եւ շուն ու գայլ
Ու այլ և այլ։
Վերջն ալ էշը վրսեմափայլ
Ըսաւ. «Ա՛ս է իմ մէկ մեղքս.
«Արտին մօտէն անցած տեղս,
«Ա՜նքս եղեր, ա՜խ, այն տարին
«Զարկի բերան մը գարիին»։

Մեր ադուէսը լըսեց, լըսեց,

Մէյ մ'ալ յանկարծ տեղէն ցատկեց,
Ձև մը առաւ այնպէս արդար,
Ու ճառ մ'ըսաւ այնպէս ճարտար՝
Որ յիշուելով միշտ անդադար
Պիտի յիշուի ան դարէ դար.
— «Տեսէք, ըսաւ, Սուլթան ու Խան,
«Ես ձեր յետին, խոնարհ ծառան,
«Ես ամէնէն մեղաւոր եմ,
«Արքայութիւնն ձուր որոնեմ։
«Մեր արքան վէս,
«Մեր արքան հեզ,
«Յայտնեց բոլոր մեղքերը մեզ.
«Սակայն, խղճով եկէք դատենք,
«Մեղքը վարձքէն խելքով զատենք։
«Ըլլա՞յ արքայ,
«Սոված ման գայ,
«Զուտէ՞ ոչխար.
«Փլի՜ր, աշխարհ...
«Ո՛չ, մեծ արքայ,
«Ինչ ոչխար կայ՝
«Տէրն է տուեր քեզ փայ-բաժին.
«Ես ի՞նչ ըսեմ այս ախմախին,
«Այս անտաշին,
«Կոպիտ էշին
«Որ արտն ուտէ անցած ատեն
«Ու չըզատէ մեղքը վարձքէն՝
«Բերելով մեր ցեղին գըլխուն
Յաւ, պատուհաս ու կարմիր ձիւն։

«Ձէ՛, պէտք է էշն իր յանցանքին
«Պատիժն առնէ կըրկին կըրկին» ։

Գազանները ոտքի ելան,
Յարձակեցան իշուն վրան,
Տո՛ւր որ կու տաս, մէջքին կողին,
Անոր լաւ ծեծ մը քաշեցին,
Կերած գարին
Քթէն բերին։

ԳԱԶԱՆ — Վայրենի կենդանի
ԺԱՆՏԱԽՏ — Մահացու եւ տարափոխիկ հիւանդութիւն
ՃԳՆԱԺԱՄ — Դժուար րոպէ, ծանր վիճակ
ՕՐՀԱՍԱԿԱՆ — Ապրելու օրերը հասած, մեռնելու վրայ եղող
ԱՐՔԱՅ — Թագաւոր
ԳԱՀ — Այն աթոռը որուն վրայ թագաւորը կը նստի
ԲԱԶՄԱՏԱՐԱԶ — Տեսակ տեսակ ձեւերով
ՑՈՎԱԶ, ՎԱԳՐ — Վայրենի կենդանիներ
ՎԱՐԱԶ — Վայրենի խոզ
ԲՈՐԵՆԻ — Վայրենի կենդանի մը, որ դիակ շատ կը սիրէ
ԿՈՒԼ ԿԵՐԹԱՆՔ — Կը կլլուին
ՑԱՍՈՒՄ — Մեծ բարկութիւն
ԴԱՐԷ ԴԱՐ — Միշտ, ամէն ատեն
ՈՐՈՆԵՄ — Փնտռեմ
ՎԷՍ — Հպարտ
ՍՈՎԱԾ — Շատ անօթի

1. Պատմեցէք այս պատմութիւնը։
2. Ինչո՞ւ բոլոր յանցանքը իշուն վրայ ձգեցին։
3. Մինակ է՞շն էր յանցաւորը։

ՄԱՄԱՅԻՆ ՑՈՐԵՆԸ

1

Թը՛ռ հա թը՛ռ. ճնճղուկներն եկան իջան Մարիամ մամային ցորենին վրայ։

Մարիամ մաման խաշած ցորեն է փռեր տանիքը։

— Հէ՜լ-էլ-էլ-էլ, հէլ-էլ-է՜լ-էլ, քըշա, քօրնալիքներ, քըշա՛. ցորենս հատցուցիք։

— Մարիամ մաման կը բարկանայ ճնճղուկներուն ու կը քշէ զանոնք՝ թեւերը զարնելով։

Ճնճղուկները կը թռին, կը թռին որ քիչ մը ետքը նորէն գան։

2

Կըռա՛, կըռա՛։

Մարիամ մաման իր օճառին կտորը տանիքն է մոռցեր։

— Վա՜յ, մո՛ւրը գլխուս. անծեղն եկաւ օճառս գողցաւ...

Մարիամ մաման ցուպը կը շարժէ, ու անծեղը կը թռի. կը թռի օճառը կտուցին մէջ ու կը թառի դէմի կաղնիին գագաթը։

3

Պէօ, պէօ. հորթը իր չուանն է քակեր ու գացեր կովին ծիծերն է ծծեր։

Մարիամ մաման կը վազէ ահա ախոռը։ Հորթը ծծեր, կաթ չէ թողուցեր իրկուան մակարդին համար։

— Պիշօ, պիշօ, իմ ձագուկս, եկուր տեղդ, եկուր մսուրիդ առջև, կը կանչէ Մարիամ մաման հորթուկին։

Հորթուկը կը ցատկէ, կը վազէ, հոս կը թռի, հոն կը թռի։ Ահա բռնեց Մարիամ մաման, պինդ կապեց չուանը վզին ու ծայրը հանգուցեց մսուրի օղակին։

Բայց ի՛նչ օգուտ, հորթը կերեր է կաթը։

4

«Անիծուխս, ծերութիւն», կըսէ Մարիամ մաման ու տքալէն տքալէն կը բարձրանայ սանդուխէն վեր։

Մարիամ մաման ծերացեր է․ աչքը աղէկ չի տեսներ, ոտքը կը դողայ, ձեռքը կը դողդղայ։

Ծերացեր է ու կը տքայ։

ՄՈՒԿԸ, ՃԱՅԵԿԸ ԵՒ ԲԱԶԷՆ

1

Մուկը օր մը մօտեցաւ ճայեկին և ըսաւ․

— Կնքամայր, կըսեն թէ այս ծովուն մէջ կղզի մը կայ, ուր խոտի տեղ շաքարեղէգ կը բուսնի․ ճար մը ըլլար, հեղ մը երթայի տեսնէի այդ պատուական երկիրը...

— Եկուր երթանք միասին, ըսաւ ճայեկը։

— Գալս աղէկ, բայց ի՛նչպէս գամ, խանը՛մ ճայ․ դուն թև ունիս՝ կը լողաս, ես ի՛նչ ունիմ։

— Ես քեզ շալակս կառնեմ, ըսաւ ճայեկը։

Մուկը ցատկեց ճայեկին կռնակը, ոտքերը տակը ծալլեց, խածաւ անոր վիզին փետուրներէն և գոցեց աչքերը։

Ճայեկը սկսաւ լողալ։

2

Շատ գացին, քիչ գացին, հասան վերջապէս շաքարեղէգի կղզին։

Մուկը իջաւ ճայեկին շալակէն և ի՛նչ տեսնայ աղէկ․ երկիր մը որ, թըհո՜ւ, աչքդ կորածին չափ նայիր, շաքարեղէգ, շաքարեղէգ, շաքարեղէգ։

Մուկը աս որ տեսաւ, խելքը գլխէն գնաց. ինկաւ շաքարեղէգներուն մէջ ու կորսուեցաւ։

Կրծեց հա՛ կրծեց, եօթն օրուան ուտելիք մէկ ժումի մէջ փորը դրաւ։ Բայց մէյ մըն ալ աչքը բացաւ որ կնքամայրը չի կա՛յ...

Ճայեկը հանգչեր էր քիչ մը, նայեր էր չորս բոլորը, յետոյ ջուրը մտեր, դարձեր էր ծովը։

— Վա՜յ, գալիքը գլխուս, ճչաց մուկը. ճայեկը գնաց ու ես մնացի այս տեղը. ինչպէս պիտի դառնամ տունս. ոչ ճամբայ գիտեմ, ոչ լողալ. առջեւս ջուր, ետեւս ջուր...

Մուկը սկսաւ լալ ու հեծեծել։

Հոս վազեց, հոն վազեց որ գլխուն ճար մը գտնէ։ Տեսաւ ծովուն եզերքի ժայռերը. «անգամ մը այդ բարձր ապառաժներուն վրայ ելլեմ, տեսնեմ փրկութեան ճամբայ մը կը գտնե՞մ», ըսաւ ինքնիրեն։

Ցատկեց, մագլցեցաւ, ելաւ ժայռերուն վրայ, նայեցաւ մէյ մը կապոյտ երկինքին, մէյ մը խորունկ ջուրերուն։ Չի կրնար թռչիլ, չի կրնար լողալ։ Ի՛նչ ընէ։ Նորէն սկսաւ լալ։

Բազէ մը, որ թառեր էր մօտիկ քարերէն

մէկուն ծայրը, լսեց մկան լացը. գլուխը վեր վերցուց և հարցուց.

— Ինչո՞ւ այդպէս կու լաս, աղա՛ մուկ։

Մուկը պատմեց գլխուն եկածը։

— Ա՞տ է եղածը. մա՛րդ Աստծու, ատոր համար ալ կու լա՞ն. ես քեզ կը տանեմ քու երկիրդ։ Կառնեմ թեւերուս վրայ ու կը թռչինք միասին։

— Ըսածդ աղէկ, հեկեկաց մուկը, բայց դուն շատ բարձրէն կը թռչիս, կը վախնամ որ խելքս դառնայ ու վար իյնամ...

— Չէ, խաթերդ համար, շատ բարձրէն չեմ թռչիր, ըսաւ բազէն, խնդալով մուկին երկչոտութեան վրայ։

4

Մուկը կպաւ բազէին կռնակէն ու ճամբայ ելան։

Քիչ մը որ թռան, մկան վախը ելաւ։

Բայց ահա ատեն ատեն մուկը կը սկսի հա՛ հա՛, հե՛ հե՛ հի՛ խնդալ։

— Ի՞նչ կայ, մո՛ւկ բարեկամ, ինչո՞ւ այդպէս կը խնդաս, կը հարցնէ բազէն։

— Բան չի կայ. ալիքներուն պարելը որ կը տեսնեմ, խնդուքս կը բռնէ, կը պատասխանէ մուկը։

Քիչ մը կերթան թէ չէ, մուկը նորէն կը սկսի քրքջալ։ Վերջապէս կը մօտենան ցամաքին։

Բազէն կիջնէ գետինը և վար կը դնէ մուկը իր կռնակէն։

— Բայց, մո՛ւկ, կը հարցնէ նորէն բազէն, շի՛տակն ըսէ՛, ինչո՞ւ այդքան կը խնդայիր ճամբան. ալիքներուն համար այդքան խնդուք չէր ըլլար, ի՞նչ էր պատճառը։

— Շիտակը ըսե՞մ, կը պատասխանէ մուկը, մանր աչքերը խաղցնելով. երբ որ ճաղատ գլխուդ վրայ կը նայէի՝ խնդուքս չէի կրնար բռնել...

— Այդպէս, հա՞, անիծա՛ծ, կըսէ բազէն զայրացած. ես քեզի բարիք ընեմ, որ դուն իմ պակասութիւններուս վրա՞յ խնդաս...

Եւ գետնէն փայտի կտոր մը կառնէ ու կը նետէ մկան։

Մուկը կը փախի, բայց փայտի կտորը իր վրայ կը մնայ։

Ահա այդ օրէն ասդին է որ մկան պոչը երկայն է։

ԲԱԶԷ — Գիշակեր թռչուն մը
ՇԱՔԱՐԵՂԷԳ — Բոյս մը՝ որ քաղցր հիւթ ունի եւ անով շաքար կը շինեն
ԳԱԼԻ՛ՔԸ ԳԼԽՈՒՍ — Վա՜յ ինծի
ՀԵԾԵԾԵԼ — Հեկեկալով, ողբալով լալ
ԺԱՅՌ — Խոշոր խոշոր քարեր
ՄԱԳԼՑԻԼ — Բարձր եւ դժուար տեղի մը վեր ելլել ձեռքերն ու ոտքերը գործածելով
ՔՐՔՋԱԼ — Բարձր ձայնով խնդալ
ՃԱՂԱՏ — Մազերը թափած (տաղ)

ՁՈՒԿԵՐԸ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Թռչունները օդին մէջ կը թռչին, որովհետև թևեր ունին։ Ձուկերը ջուրին մէջ կը լողան, որովհետև անոնք ալ լողակներ ունին։



Ինչպէս որ շատ տեսակ թռչուններ կան, այնպէս ալ կան հազարաւոր տեսակ ձուկեր. կան մանրերը՝ հազիւ մատի մը չափ, կան խոշորները, որոնք տուներու չափ մեծ են և կրնան իրենց կռնակով նաւեր անգամ շրջել։ Աշխարհի ամէնամեծ կենդանին կէտ ձուկն է, որ կապրի ովկիանոսին մէջ։

Բայց ձուկերուն մէջէն ամէնէն վայրագն ու վտանգաւորը՝ շնաձուկն է։ Շնաձուկը կատաղութեամբ կը յարձակի մարդուն վրայ, բերնի մէկ հարուածով կը փրցնէ անոր թևը, ոտքը և այսպէս կտոր կտոր ընելով կուտէ։

Ձուկերը երբ ջուրէն դուրս ելլեն՝ անմիջապէս կը մեռնին։ Բայց ձուկերն ալ օդի պէտք ունին, անոր համար ատեն ատեն ջուրին երեսը կելլեն և իրենց խռիկներով օդ կը շնչեն։

Կան թռչուններ որ ջուրին մէջ լողալ ալ գիտեն, օրինակի համար, բադը։ Այդ տեսակ

Թռչունները կը կոչուին Ջրային Թռչուն։

Ջրային Թռչունները կրնանք ճանչնալ իրենց ոտքերէն։ Նայեցէք բադին ոտքերուն. անոնք ծածկուած են տեսակ մը թաղանթով, որպէսզի լողալու ատեն կարող ըլլան ջուրը ետ հրել։

ԼՈՂԱԿ — Ձուկին թեւը
ԲԱԶՄԱՏԵՍԱԿ — Շատ տեսակ
ԽՌԻԿ — Ձուկին ականջները

1. Ինչո՞ւ Թռչունները թեւ ունին։
2. Ինչո՞ւ Ձուկերը լողակ ունին։
3. Ձուկերը ի՞նչ բանով օդ կը շնչեն։
4. Ո՞ր Թռչուններուն Ջրային Թռչուն կ՚ըսենք։
5. Ջրային Թռչուններուն ոտքերը ինչո՞վ ծածկուած են։

ԶԱՏԻԿ

Վաղը կարմիր զատիկ է,
Հազարէն մէկ հատիկ է.
Մեռնիմ նազով իր գալուն՝
Որ կը բերէ մեզ գարուն։

Գոգը լեցուն կանաչ տերև,
Հետն ալ ունի պայծառ արև.
Մատա՜ղ իրեն կոխած ոտքին՝
Որ կը բանայ ծաղիկ չորս դին ։

Եկո՜ւր, եկո՜ւր, մեր զատի՛կ ճան,
Մենք ամէնքս քեզի ղուրպան.
Եկո՛ւր, հասիր մեր երթիքին,
Վերջ տուր երկար այս մեծ պահքին ։

Եկո՜ւր, բեր մեզ գառնուկ և ուլ,
Կարմիր հաւկիթ ծայրերը սուր.
Գառնուկն առնենք դաշտը ելլենք,
Ան խոտ ուտէ, հաւկիթն ալ մենք։

ԱՂՔԱՏ ՀԱՐՈՒՍՏԸ

1

Ժամանակին կար ու չկար, աղքատ մը կար ։ Այս աղքատը, ամէն անգամ որ իրկունը իր չոր անկողինը մտնէր, կըսէր մտքէն ․

— Ա՜խ եթէ հարուստ ըլլայի՝ ես ալ լաւ կապրէի և ուրիշներուն ալ բարիք կընէի։

Եւ ժամերով չէր կրնար քնանալ ու կը մտմտար թէ ինչո՞ւ աղքատ է ինք։

Օր մըն ալ, երբ այսպէս կը մտածէր, յանկարծ մութին մէջէն ձայն մը լսեց․

— Ահա քեզի քսակ մը։ Բայց, լսէ, հասարակ քսակ մը չէ ասիկա․ մէջը ոսկի մը կայ, երբ այդ ոսկին առնես, տեղը իսկոյն ուրիշ ոսկի մը պիտի գտնես։ Ուզածիդ չափ առ, մի՛ վախնար ։ Միայն տես, քսակը վերջէն գետը պէտք է ձգես․ գետը չձգած՝ հինգ փարա անգամ պիտի չծախսես, եթէ ոչ՝ բոլոր ոսկիներդ փալասի կտոր կը դառնան ․․․

Եւ ահա, փա՜թ, աղքատին առջև քսակ մը ինկաւ։ Մարդը ուրախութենէն խենդի պէս ոտքի ելաւ, առաւ քսակը և հանեց մէջէն դեղին, կլորիկ, փայլուն ոսկի մը։ Հանեց թէ չէ, տեսաւ որ մէջը հատ մըն ալ կայ։

— Այս գիշեր մինչև առտու ոսկիները կը դիզեմ և կըլլամ հարուստ․ յետոյ, քսակը կը տանեմ գետը կը ձգեմ և ուզածիս պէս երջանիկ կապրիմ, — ըսաւ մեր մարդը ։

2

Աղքատը մինչև լոյս քսակէն ոսկի հանեց, դիզեց հա՛ դիզեց, և առաւօտուն տեսաւ որ իր սենեակին մէջ խոշոր կոյտ մը ոսկի ունի։

Ելաւ որ քսակը տանի գետը նետէ ։ Բայց յանկարծ միտքը փոխեց ․

— Ինչո՞ւ այսքան շուտ տանեմ գետը նետեմ․․․ չէ, դարձեալ այսպէս կոյտ մը դիզեմ՝ անկէ ետքը։

Եւ սկսաւ արագ արագ հանել ոսկիներն ու դիզել ։

Եղաւ իրկուն, եղաւ գիշեր ու աղքատը տակաւին կը հանէր ոսկիները քսակէն։ Գիշերը հագիւ երկու ժամ աչքը գոցեց․ առտուան լոյսը ցաթելուն պէս՝ ցատկեց ելաւ անկողնէն և յաջորդ օրն ալ սկսաւ նորէն դիզել ոսկիները ։

Այսպէս, անցան օրեր, շաբաթներ, ամիսներ, ամբողջ տարի մը։ Կերթար ողորմութիւն կուզէր,

չոր հաց կուտէր, ցնցոտիները չէր փոխեր և աղքատ կը մնար, որովհետև իր ոսկիներէն չէր կրնար օգտուիլ՝ քսակը գետին մէջ նետած չըլլալուն համար։

Հանգիստ չունէր ո՛չ ցորեկը, ո՛չ գիշերը։ Տանը դռները ամուր կը գոցէր, որպէսզի չըլլայ թէ գողը գայ ոսկիները տանէ։ Դուրս ելածին պէս՝ դարձեալ շտապով տուն կը վազէր, կը նստէր չոր գետնին վրայ և շարունակ կը դիզէր ոսկիները։

3

Վերջապէս օր մը մտածեց.

— Է՜հ, ա՛լ հերիք է. ինծի պէս հարուստ չի կայ այս աշխարհիս երեսը։ Երթամ, քսակը գետը նետեմ։

Տունէն դուրս ելաւ և դիմեց դէպի գետը։ Ճամբան, պինդ կը սեղմէր քսակը գրպանին մէջ. մատերը յանկարծ նորէն ոսկիին դպան և իրեն այնպէս թուեցաւ թէ այդ ոսկին մինչև հիմա իր հանածներէն ամէնէն ծանրն ու մեծարժէքն էր։

— Վերադառնամ տուն, այս մէկն ալ հանեմ, յետոյ վազն ի վազ տանեմ քսակը ձգեմ գետը, — ըսաւ ինքն իրեն ու տուն դարձաւ։

Հանեց այդ մէկ ոսկին ալ, անկէ յետոյ միւսն ալ, երրորդն ալ, ու մնաց այդ օրն ալ տունը, յաջորդ օրն ալ, յաջորդ շաբաթն ալ...

Ագահը ծերացաւ, երեսը դեղնեցաւ իր

ոսկիին պէս, բայց երբեք չբաժնուեցաւ իր մոգական քսակէն։

Ու այդպէս ալ մեռաւ. աղքա՜տ իր ոսկիներուն մէջ, աղքա՜տ խշտեակի մը վրայ, մուրացկանի հագուստով, քսակը պինդ բռնած ձեռքը։

ԿՈՑՏ — Դեզ
ՑՆՑՈՏԻ — Պատռտած զգեստ
ԴԻՄԵՑ — Ցիտկուեցաւ, ուղղուեցաւ
ԱԳԱՀ — Անկուշտ աչք, քիչով չգոհացող
ՄԵԾԱՐԺԷՔ — Արժէքը շատ, արժէքը մեծ
ՄՈԳԱԿԱՆ — Թիլիսիմ ունեցող
ԽՇՏԵԱԿ — Աղքատի կամ կենդանիի յարդէ անկողինը

ԹԱՂԱՐԻՍ ՄԷՋ

Թաղարիս մէջ գետնախնձոր մը տնկեցի։

Հիմա պիտի ըսէք վրաս խնդաք թէ Թաղարին մէջ ալ մարդ գետնախնձոր կը տնկէ՞. Թաղարին մէջ, շատ շատ, ծաղիկ կը ցանուի։

Է՜հ, եթէ կուզէք՝ խնդացէք. բայց գիտցէք որ գետնախնձորն ալ սիրուն բոյս մըն է և ժամանակին, Թագուհին մէկը իր լամբակին մէջ անոր ծաղիկները կանցնէր։

Տնկած բոյսս աճեցաւ և աշնան, Թաղարիս մէջէն տասներկու հատ խոշոր գետնախնձոր հանեցի։

Հողը չպարպեցի Թաղարին մէջէն և միւս տարին նորէն գետնախնձոր մը տնկեցի անոր մէջ։ Բայց այս անգամ տունկս չաճեցաւ, դեղնեցաւ և վերջը վերջը չորցաւ։

Գիտէ՞ք ինչու այսպէս եղաւ։ Պիտի ըսէք որ հողը ա՛լ սնունդ չունէր իր մէջ. շա՛տ լաւ, բայց ահա ճիշտ նոյն հողին մէջ ցորեն կը ցանեմ և ցորենները հիանալի կերպով կաճին ու քիստեր կը կապեն։ Նոյն հողը որ գետնախնձորիս համար սնունդ չտուաւ, ընդհակառակը, ցորենիս համար տուաւ։

Ես ալ ասոր պատճառը չէի գիտեր և գացի փորձառու հողագործի մը հարցուցի։ Հողագործը պատասխանեց ինծի.

— «Հողը զարմանալի բնաւորութիւն մը ունի. երբ միշտ միևնոյն բոյսը ցանես իր մէջ՝ շուտով կը յոգնի և ա՛լ սնունդ չի կրնար տալ. ասոր համար, պէտք չէ որ նոյն հողին մէջ, վրայէ վրայ, միևնոյն բոյսը ցանուի։ Խելացի հողագործները շատոնց փորձառու են այս բանին. մէկ արտին մէջ երբ ցորեն ցանած են, յետոյ գետնախնձոր կը տնկեն, յետոյ վարսակ կամ գարի կը ցանեն»։

Գիտէ՞ք այս բանը։ Գոնէ ես չէի գիտեր։

ԹԱՂԱՐ — Այն ամանը, որուն մէջ ծաղիկ կը տնկեն

ԼԱՄԲԱԿ — Զգեստներուն այն ծակերը, որոնց մէջէն կոճակը կանցնենք

ՍԵՐՄԱՆԵԼ — Սերմը հողին մէջ ցանել

ԱՐԱԳԻԼ

Այ արագիլ,
 բարով եկար,
Դուն արագիլ,
 բարով եկար.
Մեզի գարնան
 նշան բերիր,
Մեր սրտիկը
 գըուարթ ըրիր։

Այ արագիլ,
 մեզի իջիր,
Դուն արագիլ,
 մեր տունն իջիր,
Մեր ծառին
 քու բոյնիկդ դիր,
Վա՜յ մեր սիրուն
 դուն արագիլ։

Ա՜խ, արագի՛լ, քեզ գանգատիմ,
Այ արագիլ, քեզ գանգատիմ.
Ես իմ հազար ցաւերս ըսեմ,
Սրտիս ցաւեր, հազար ցաւեր։

Մեր արագի՛լ, երբ դուն գացիր,
Դուն մեր ծառէն երբ որ գացիր,
Սաստիկ հովեր ցուրտ փըչեցին
Ծաղիկներըս իմ չորցուցին։

Պայծառ երկինքն էր մըթընտեր,
Պայծառ արևն էր խաւարեր,
Մեր վըրայ ձիւն, ձիւն կը բըրդէր,
Ճերմակ ձմեռ վար էր եկեր։

Վարագայ մեծ սարէն բըռնած,
Մեր Վարագայ սարէն բըռնած,
Ձիւնն էր իջեր, հողն էր ծածկեր,
Կանաչ դաշտը քուն էր մտեր։

Ա՜յ արագիլ, բարով եկար,
Դուն արագի՛լ, բարով եկար.
Մեզի գարնան նըշան բերիր,
Մեր սըրտին դուն արև բերիր։

ԱՌԱՋԻՆ ՁԻՒՆԾԱՂԻԿՆԵՐԸ

1

Երկար ու սպիտակ մօրուքով ծերունին նստեր էր ու կը մտմտար։ Մութ ու ցուրտ էր անոր շուրջը։

«Աշխարհիս մէջ մէկը չի կայ որ ինծի չափ գործեր ըրած ըլլայ», կը խորհէր ան և կը սկսէր համրել իր գործերը։

Իր չորս կողմը լռութիւն էր։ Բայց յանկարծ ձայն մը եկաւ ականջին։

— Ի՜նչ աղմուկ է աս, ըսաւ ծերունին։ Չէ՞ որ ես ամէնուն ալ լռութիւն հրամայած եմ։ Այս ձայները նման են ջրի կարկաչին... բայց չէ՞ որ ջուրին ալ հրաման տուած էի որ լռէ։ Հապա սա աղմո՜ւկը. իրաւ որ կը նմանի թռչուններու երգին... բայց ես բոլոր թռչուններն ալ խրկած չէ՞ի հեռաւոր հարաւը»։

2

Ծերունիին խօսքը բերանն էր դեռ, երբ տեսաւ որ իր առջև կանգնած է ոսկեգանգուր և բոսորադէմ պատանի մը։

— Ո՞վ թոյլ տուաւ քեզի որ հոս գաս, ըսաւ ծերունին։

— Մի բարկանար, ալե՛որ. եկայ տեսնելու քու գործերդ. ըսէ՛ նայիմ, ի՞նչ է քու զօրութիւնդ։

— Ես կը փչեմ գետինը և անիկա կը ծածկուի սառոյցով, ըսաւ ծերունին։

— Իսկ ես կը փչեմ սառոյցին վրայ և անիկա կը հալի, պատասխանեց պատանին։

— Ես կը թափահարեմ գլուխս ու երկիրը ձիւնով կը ծածկուի։

— Ես կը թափահարեմ ոսկեհուր գանգուրներս, և պայծառ կը ժպտի արեգակը ու կը հալի ձիւնը։

— Ես կը հրամայեմ թռչուններուն՝ լռեցէք, հեռացէք. ու անոնք իրենց թեւերը բանալով՝ կը թռին հեռաւոր երկիրներ։

— Իսկ ես կըսեմ. «Թռչուններ, վերադարձէք», ու անոնք կուգան, օդին մէջ կը թռչին ու կերգեն։

— Երբ ես սառոյցէ մատներովս կը դպնամ տերևներուն, տեսնես թէ անոնք ամէնքն ալ ինչպէս սարսափահար գետին կը թափին ծառերէն։

— Ես երբեք տերևին թափելը չեմ տեսեր. ես տեսեր եմ միայն տերևները կանաչ, մատղաշ և ուրախ, պատասխանեց պատանին։

3

Ծերն ու պատանին այսպէս երկար խօսեցան ամբողջ գիշերը։ Ծերունին սկսաւ յոգնիլ, մինչդեռ պատանին հետզհետէ աւելի կը զուարթանար։

Բացուեցաւ լոյսը. փայլեցաւ արեգակը ու



Իրիկուան Աղօթք Դաշտին մէջ

երկինքը լեցուեցաւ թռչուններու ուրախ ձայնով։

Պատանին հասկցաւ որ ամէնքն ալ իմացած են իր գալուստը. դարձաւ որ միան բարով ըսէ ծերունիին ։

Բայց ծերունին չի կար...

Ծերունին չի կար, սակայն իր նստած տեղը կերևային մէկ քանի սպիտակ բիծեր, ձիւնի վերջին մնացորդները։

Պատուհանին մօտեցաւ ու տեսաւ որ անոնք ո՛չ թէ ձիւնի մնացորդներ են, այլ սպիտակ ձիւնծաղիկներ, գարնան առաջին նշանները ։

Գիտցէք թէ ո՛վ էր ծերունին և ո՛վ էր պատանին ։

ԿԱՐԿԱՉ — Ջուրին գլգլալը
ՈՍԿԵԳԱՆԳՈՒՐ -- Ոսկիի պես դեղին մազեր ունեցող
ՎՈՍՈՐԱԴԷՄ — Վարդի գոյն դեմք ունեցող
ԱԼԵՒՈՐ — Ծերունի, հալուոր
ԿԸ ԹԱՓԱՀԱՐԵՄ — Ուժով մը կերերցնեմ
ՈՍԿԵՀԵՐ — Ոսկիի պես դեղին մազեր ունեցող

1. Ո՞վ էր ծերունին և ո՞վ էր պատանին։
2. Ըսէք թէ ի՛նչ գործեր ըրած էր ծերունին և ի՞նչ գործեր պիտի ընէր պատանին։

ԱՆՁՐԵՒԻՆ ԿԱԹԻԼԸ

Գիշերը անձրև կու գար, բայց ահա գարնան առաւօտը կը լուսնայ պայծառ արեգակով։

Խոտերը լուացուեր, մաքրուեր են դաշտին մէջ. երկինքը կապոյտ է և վրան ամպի փոշի մը անգամ չի կայ։

Ճամբաները կը չորնան ու արտերուն նորածիլ կանաչները արևին տակ կը պսպղան։

Առու մը կը հոսի դաշտին մէջէն գլգլալով և իր եզերքը մանուշակ մը կօրօրուի։

Մանուշակին մէկ թերթիկէն կախուած է անձրևի կաթիլ մը՝ ադամանդի պէս յստակ ու մաքուր։ Կօրօրուի կաթիլն ալ ու կըսէ կապոյտ ծաղիկին.

— Սիրո՜ւն ծաղիկ, մի՛ օրօրեր գլուխդ, մի՛ բանար թարթիչներդ, քիչ մըն ալ սպասէ. ես յոգնած եմ, թող որ քիչ մը հանգիստ առնեմ ու ճամբաս շարունակեմ։ Կուզեմ որ քիչ մը հանգչիմ քու փափուկ պսակիդ վրայ։

— Շա՜տ լաւ, ազնիւ եղբայր, կըսէ մանուշակը կաթիլին։ Բայց ո՞ւրկէ կու գաս որ այդքան յոգնած ես և ո՞ւր կերթաս այդպէս աճապարանքով։

— Ասկէ շատ շատ առաջ ես ալ կաթիլ մըն էի այն կաթիլներուն պէս, որ կը գտնուին հեռաւոր լիճին ջուրերուն մէջ։ Այդ լիճէն ամէն օր կաթիլները կը շոգիանան ու երկինք կելլեն։ Կարգը եկաւ ինծի. ես ալ իմ ընկերներուս հետ բարձրացայ, բարձրացա՜յ ու հովը քշեց զիս հե-

ռու երկիրներ։ Ընկերներէս շատերը միացան իրարու, եղան խոշոր խոշոր ամպեր և գացին դէպի ուրիշ աշխարհներ։

«Ես դեռ երկինքին մէջ էի. և ահա առուներէն, գետերէն, լիճերէն ու ծովերէն եկան, ինծի միացան հազարաւոր ուրիշ կաթիլներ։ Մենք ալ խոշորցանք, եղանք հսկայական ամպեր և ծածկեցինք երկինքին երեսը։ Այս գիշեր անձրև դարձանք և վար իջանք, որպէսզի ջրենք բոյսերը և առատցնենք աղբիւրները։

— Ո՞ւր պիտի երթաս ուրեմն դուն հիմա, հարցուց մանուշակը դարձեալ։

— Հիմա ես պիտի կաթիմ գետինը, պիտի մտնեմ հողին տակ և պիտի ջրեմ քու արմատներդ, ա՛ղուոր ծաղիկ։

Լռեց կաթիլը, անգամ մըն ալ օրօրուեցաւ, մնաս բարով ըսաւ մանուշակին և ակնթարթի մը մէջ անհետացաւ։

Մանուշակը իր թերթերը բացաւ և բարև տուաւ արեգակին տաքուկ ճառագայթներուն, որ կը գգուէին զինքը։

ԽՆԿԱՀՈՏ — Անուշ հոտող
ԿԸ ԾԱԾԱՆԻ — Կը շարժի, կը ծփայ
ՆՈՐԱԾԻԼ — Նոր ծլած
ԿԸ ՊՍՊՂԱՆ — Կը փայլին
ԽՈԽՈՋԱՁԱՅՆ — Վազող առուին հանած ձայնը
ՊԱՂՊԱՋՈՒՆ — Շողշողուն, փայլուն
ՊՍԱԿ — Ծաղիկին մէկ մասը

1. Ինչպէ՞ս կը կազմուին ամպերը. ի՞նչ պատմեց կաթիլը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՂԲԱՅՐԸ

Եկո՛ւր երթանք, իմ եզ ճա՛ն,
Համ վար ընենք, համ ալ ցան.
Աշխատանքի օրերը
Ահա եկան, մօտեցան։

Գութանը դուն կը քաշես
Ու մաճկալդ ալ կըլլամ ես.
Ամառ, աշուն թէ ձըմեռ,
Այս արօրն է պահեր մեզ ։

Եկո՛ւր երթանք, վար ընենք,
Համ վար ընենք, համ ցանենք.
Առատ քըրտինք թափելով

Մեր ցաւերուն ճար ընենք։

Դուն լաւ գիտես թէ, եզ ճան,
Ոչ խոտ ունիս, ո՛չ դարման,
Ոչ ալ մեր տան քիւլֆէթը
Զօր հաց ունի առտըուան ։

Ամբարները դատարկ են,
Ո՛չ գարի կայ, ո՛չ ցորեն.
Քաշելով մեծ նեղութիւն,
Պահեր եմ այս սերմացուն ։

Եկուր երթանք, աղբա՛ր ճան,
Համ վար ընենք, համ ալ ցան.
Պարապ-սարապ կենալէն
Ձեռքս ու ոտքս թուլացան ։

ԱՒԵՏԻՍ ԿՈՒՏԱՆ

1

— Եկա՜ւ, եկա՜ւ, կերգէ խայտիտը։
— Ահա կու գայ, կը սուլէ կերնեխը։

Մե՛նք ենք որ կը բերենք զայն, կը ճչան ծիծառները՝ իրենց սուր ձայնով. մենք նախակարապետն ենք անոր։

Ու բոլոր թռչունները ցնծութեամբ կեղանակեն․

— Կեցցէ՜, կեցցէ՜ գարունը։

Բայց ժամանակ կորսնցնելու չի գար. պէտք է լաւ տեղ որոշել, շիւղ բերել, կաւ կրել և բոյն շինել։ Շինել կամ երդիքին տակ, կամ կանաչներու մէջ, կամ ծառերու գագաթին վրայ։

— Սա թաւ մացառին տա՜կ։
— Չէ՛, այս միւսը աւելի լաւ է։
— Հապա սա խոշոր կնձնի՞ն։
— Ո՛չ, այս ուռիին վրայ աւելի յարմար է։

2

Եւ թռչունները ձայն կու տան ամէն կողմէ. զիրար կը կանչեն ծառէն ու թուփէն։ Կը ճռուողեն, կը վիճին, կը վիճի՜ն։ Դիւրի՞ն բան է տուն շինելը. պէտք է առաջէն աղէկ խորհիլ, յարմարութիւններն ու անյարմարութիւնները նախատեսել, որպէսզի ետքէն չզղջան։

Միայն ծիծեռնակները վարանում չունին. կը գտնեն իրենց հին բոյները, կը վերանորոգեն զանոնք, նոր ցախ ու կաւ բերելով։

3

Բայց թռչունները չեն միայն որ իրարանցումի մէջ են։ Միջատներն ալ կարտորան և կաշխատին ժրաջան։

Մրջիւնն ու մեղուն գործի վրայ են և իրենց ձմեռուան պաշարը կը պատրաստեն։

Բազմերանգ թիթեռները թեւերնին արեւուն տակ կը բանան ու կը թառին մէկ խոտէն միւսը։

Ջորեակները տնկելով իրենց բողկուկները, կը թռին դանդաղօրէն՝ տեսնելով որ իրիկունը կը մօտենայ։

Ծղրիթներն ու ճպուռները կը ճռճռան։ Կայծոռիկները կը փայլին խոտին մէջ, կայծի պէս։

Ամէնքն ալ մեծ պատրաստութեան մէջ են՝ դիմաւորելու համար թանկագի՜ն հիւրը։

4

Հապա ծաղիկնե՜րը։ Անոնք ալ տօնական ուրախութեան մէջ են և կը ժպտին։

Մանուշակը կը բանայ իր կապոյտ աչուկը. ճերմակ զանկածաղիկը կը պահուըտի կանաչ խոտերուն մէջ և սպիտակ աստղի կը նմանի. ապրիմ-չապրիմները, իրենց դեղին կոճակով և ճերմակ թերթուկներով, կօրօրուի՜ն, կօրօրուի՜ն. հապա հրանունկնե՜րը, այնպէս վեր կը տնկեն

իրենց փայլուն գլուխները, որ կարծես մարգա-գետնին մէջ ցանուած ոսկիէ կոճակներ են։

Ու ծաղիկները միաբերան կըսեն.

— Շնորհակա՛լ ենք, շնորհակա՛լ ենք, աղուո՛ր գարուն։ Դուն որ եկար, ձմեռը գնաց, ցուրտը դադրեցաւ. ա՛լ հիմա չենք մսիր, ա՛լ հիմա չենք դողար։ Արեւուն տակ կը տաքնանք, սիւզին հետ կը խաղանք և կը ծծենք լո՛յսը։ Բարի՛ եկար, հազա՛ր բարի եկար, կենսաբե՛ր գարուն։

ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏ — Առաջ հասնող եւ աւետիս տուող
ՇԻԻՂ — Խոտի, փայտի բարակ ճիւղեր
ԹԱԻ -- Խիտ
ԿՆՁՆԻ — Ծառ մը (*գարա աղաճ*)
ՈՒՌԻ — Ծառ մը
ՆԱԽԱՏԵՍԵԼ — Բան մը առաջէն հոգալ, առաջէն տեսնել
ԿԱՐՏՈՐԱՆ — Կանապարեն
ԲԱԶՄԵՐԱՆԳ — Շատ գոյներ ունեցող
ՁՈՐԵԱԿ — Մարախի տեսակ ճճի մը
ԲՈՂԿՈՒԿ — Մարախին կոտոշը
ԾՂՐԻԹ — Այն փոքր միջատը որ կրակարաններու մօտ կապրի եւ ծըթ-ծըթ ձայն մը կը հանէ գիշերները
ՃՊՈՒՌ — Այն փոքր միջատը որ ամառները ծառերուն վրայ կը պոռայ՝ ժի-ժի ձայն մը հանելով
ԿԱՅԾՈՌԻԿ — Այն միջատը որ գիշեր ատեն խոտերուն մէջ կայծի պես կը փայլի
ՍԻԻԳ — Բարակ, թեթեւ հով

1. *Ո՞վ է այն հիւրը որուն համար Թռչունները կը պոռան թէ «եկա՛ւ, եկա՛ւ»։*
2. *Գարնան առաջին օրերուն մէջ ի՞նչ կ'ընեն Թռչունները, ի՞նչ կ'ընեն միջատները, ի՞նչ կ'ընեն Ծաղիկները։*

ԴԱՇՏԱՅԻՆ ԻՐԻԿՈՒԱՆ ԵՐԳ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականին քունն անուշ։

Ցաթեց լուսնակն երկինքէն,
Հովուի սրինգն էր անուշ։

Հօտաղն եզներ կարածէ,
Մաճկալ պառկեր՝ քունն անուշ։

Մեղմիկ քամին կը փչէ,
Ծովային հովն էր անուշ։

Դաշտեր, ձորեր մնջեր են,
Գլգլան ջրերու ձայնն անուշ։

Հաւեր թռան իրենց բոյն,
Սոխակին տաղն էր անուշ։

Անմահական հոտ կու տայ
Քեաֆուր վարդին հոտն անուշ։

ՇԻՆԱԿԱՆ — Գիւղացի
ՍՐԻՆԳ — Փայտէ շինուած նուագարան մը (*խավալ*)
ՀՕՏԱՂ — Եզներն արածող հովիւ
ՄԱՃԿԱԼ — Մանր քշող մարդ
ՄՆՋԵՐ ԵՆ — Թեթեւ քունով քնացեր են

ՄՐՋԻՒՆՆԵՐՈՒՆ ԲՈՅՆԸ

Նայեցէք, նայեցէք. կերթան, կու գան, նորէն կանգնին, նորէն կը դառնան. մրջիւնները, մրջիւնները։ Մէկը ցորենի հատիկ մը կը քաշէ ետևէն, ուրիշ մը փշրանք մը շալկեր է, սա միւսը իրմէ երկու անգամ խոշոր շիւղի մը լծուեր է։ Ու այդ բոլորը կը կրեն դէպի բոյնը։

Ահա իրենց բոյնն ալ, որ ծակեր են պատին տակ. կը մտնեն, կելլեն հարիւրներով, և շարոց շարոց կերթան բարիք բերելու անդուլ, անդադար։

Մրջիւններն ալ մեղուներուն պէս են։ Կապրին միասին հարիւրներով ու հազարներով։ Ընկերութեամբ կը շինեն իրենց բոյնը, ընկերութեամբ կաշխատին և ընկերութեամբ կը պահեն իրենց կեանքը։

Ոմանք ուտելիք բերելու կերթան. ուրիշներ բոյնին մէջ կը կենան և հաւկիթներուն խնամք կը տանեն, որպէսզի նոր ձագեր ելլեն։

Ունին կարգ կանոն և ամէնքն ալ կը հնազանդին իրենց դրած օրէնքներուն։ Գիտեն թէ առանց կարգ կանոնի, առանց հնազանդելու իրենց օրէնքներուն՝ չեն կրնար ոչ իրարու օգնել, ոչ ալ միասին ապրիլ։

Մեղուներուն և մրջիւններուն պէս աշխատասէր կենդանի քիչ կայ։ Բայց, մինչդեռ մեղուն օգտակար միջատ է, մրջիւնը այդպէս չէ։

Շատեր կը կարծեն թէ մրջիւնները պարէն կը հաւաքեն, որ ձմեռը ուտեն։ Սխալ է այս կարծիքը։ Մրջիւնները կը թմրին, կը քնանան բոլոր ձմեռը, հետևաբար բան չեն կրնար ուտել։

Մրջիւնները լեզու չունին, բայց իրարու հետ կրնան խօսիլ։ Իրենց բեղկուկները իրարու կը քսեն և այդպէս իրենց միտքը մէկմէկու կը հասկցնեն։

Մեր երկրին մրջիւնները փոքր են. բայց տաք երկիրներու, օրինակի համար Ափրիկէի մէջ, կան շատ խոշորները։ Տեսակ մը մրջիւն ալ կայ, որ թունաւոր է. վայրենիները կը բռնեն զանոնք, կը չորցնեն, փոշի կընեն և իրենց նետերուն ծայրը կը քսեն. երբ այդ նետով մէկը վիրաւորեն, այլևս չազատիր մարդը ու կը մեռնի։

ԵՂՍԱ ՄՕՐՔՈՅՐԻՆ ԼԱՊՏԵՐԸ

1

Եղսա մօրքոյրը մինակ էր մնացեր աշխարհին մէջ։ Ունէր չունէր, միայն աղքատիկ տնակ մը ունէր։

Գիշեր մը քամին կոռնար և ալիքները կը բախուէին մօտակայ ժայռերուն. Եղսա մօրքոյրը իր իլը կը դարձնէր և կը խորհէր.

— Մէկը չունիմ որ իմ վրաս մտածէ. մէկը չի կայ՝ որուն վրայ ես մտածեմ... վա՜յ մենաւորին գլխուն։

Եւ ահա նորէն լսեց ալիքներուն աղմուկը։

— Տէր Աստուած, մտածեց Եղսա մօրքոյրը, հիմա քանի՜ քանի՜ նաւեր պիտի խորտակուին մեր տունէն քիչ մը անդին, ծովուն մէջ։ Եթէ փարոս մը ըլլար այս գիւղին մէջ՝ միշտ լոյս կու տար նաւերուն և կը փրկէր զանոնք վտանգներէ...

Ի՞նչ լաւ բան պիտի ըլլար, եթէ ամէն գիշեր լապտեր մը վառէր իր պատուհանին մէջ և լոյս տար նաւորդներուն։ Ճրագը շատ աղէկ, բայց Եղսա մօրքոյրը աղքատ էր, ո՞ւրկէ գտնէր լապտերի դրամ, ո՞ւրկէ գտնէր աւելորդ քարիւղի դրամ։

Մտածեց և տեսաւ որ եթէ ամէն գիշեր ժամ մը աւելի աշխատի՝ թէ լապտերը պիտի գնէ, թէ ամէն օրուան քարիւղը։

Աշխատեցաւ այսպէս շաբաթ մը և գնեց լապտերը, վառեց զայն և դրաւ իր պատուհանին մէջ։

Անկէ ետք ամէն գիշեր, երբ կը մթնէր թէ չէ, Եղսա մօրքոյրին տնակէն կը պլպլար լոյսը և ճամբայ ցոյց կու տար նաւորդներուն։

2

— Որո՞ւ համար կը վառես այդ լապտերդ, Եղսա մօրքոյր, կը հարցնէին գիւղացիները անոր. ո՞վ ունիս որ պիտի գայ...

Եւ Եղսա մօրքոյր, բարի ժպիտով ցոյց կու տար լայնարձակ ծովը ու կըսէր.

— Լոյս կու տամ իմ եղբայրներուս, իմ զաւակներուս...

Եւ իրաւ, երբ մրրիկը կը ծառացնէր ահագին ալիքները և նաւը կը հանէր մէկ վեր ու կը ձգէր մէկ վար, նաւուղիղը կը տեսնէր հե-

ռուն պլպլացող լոյսը և կը պոռար նաւաստիներուն ․

— Նայեցէք հեռո՛ւն, Եղսա մորքոյրին ճրագը կը վա՛ռի. զգո՛յշ, այս տեղ ժայռեր կան . . .

3

Շատ տարիներ վառեցաւ Եղսա մորքոյրին լապտերը այն տեղ ։ Օրէ օր աւելի ու աւելի կը ծռէր պառաւին մէջքը, աւելի ու աւելի վար կը կախուէր անոր ճերմկած գլուխը. կը դողային անոր չորցած ձեռքերը, բայց լապտերը կը վառէր միշտ ու կը շարունակէր տալ իր լոյսը ։

Գիւղացիները երբ առտու մը արթնցան, մեռած գտան Եղսա մորքոյրը ։ Գեղ մը գեղով հաւաքուեցան ու թաղեցին զայն ։

Երբ հողը լեցուցին անոր վրայ և գերեզմանը քարով ծածկուեցաւ, քահանան ըսաւ ․

— Մնա՛ս բարով, Եղսա՛ մորքոյր. բայց ո՛վ պիտի վառէ քու լապտերդ, ո՛վ որո՞ւն ճրագը լոյս պիտի տայ նաւորդներու ճամբուն ։

Այն ատեն գիւղացիները պոռացին ․

— Մե՛ր, տէ՛ր հայր, մե՛ր ճրագը։

Եւ մինչև այսօր ալ այն գիւղին մէկ բլուրին գագաթին վրայ՝ կը վառի բարձր շէնքի մը մէջ լապտերը, Եղսա՛ մորքոյրին լապտերը և կը լուսաւորէ խաւարը։

Մինչև այսօր ալ նաւորդը հեռուէն տեսնելով լապտերին լոյսը՝ կը կանչէ ․

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
... Мясникяна
Մ. ՄՅԱՍ...ԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

— Տեսէ՛ք, Եղսա մորքոյրին ճրագը կը վառի հո՛ն. զգո՛յշ, ժայռեր կան այստեղ։

ԻԼ — Փայտէ շինուած այն գործիքը՝ որով բուրդ կը մանեն
ԽՈՐՏԱԿՈՒԻՆ — Փշրուին, կտոր կտոր ըլլան
ՓԱՐՈՍ — Այն լապտերն է որ ծովուն եզերքը բարձր տեղ մը կը դրուի, գիշերը նաւերուն ճամբայ ցոյց տալու համար
ՆԱՒՈՐԴ — Նաւու ճամբորդ
ԿԸ ԾԱՌԱՑՆԷՐ — Կը բարձրացնէր
ՆԱՒՈՒՂԻՂ — Նաւը առաջնորդող

1. Ո՞րու համար է որ Եղսա մորքոյրը կ՚ըսէր. «լոյս կու տամ իմ եղբայրներուս, իմ զաւակներուս». չէ՞ որ ինք ոչ եղբայր ունէր և ոչ ալ զաւակ։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Р А. Пуб...
7/XI—1922
Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուսուցիչներէն կը խնդրենք նախապէս սրբագրել հետեւեալ վրիպակները .

Էջ 95, *վերէն՝ տող* 8, զարնելով, *պէտք է ըլլայ* **շարժելով**

Էջ 112, *վերէն՝ տող* 19, թափելը , *պէտք է ըլլայ* **թափիլը**

2013

360r

ԳԻՆ 4 ՂՐՈՒՇ

ԼՈՒՍԱՂԲԻՒՐ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

1. — ՄԵՂՐԱԳԵՏ, տարրական ընթացք Ա. Տարի, 128 էջ, 60-65 նկար եւ 4 մասնաւոր նկարներ —

Գին 4 ղրուշ

ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ ՀՐԱՊԱՐԱԿ Կ'ԵԼԼԷ՝

2. — ՄԵՂՐԱԳԵՏ, տարրական ընթացք Բ. Տարի —

Գին 5 ղրուշ

Դիմել մեր հասցէին՝

ՊՈԼԻՍ — Եսմա-Ալթը ճամլը խան — **Թնճիկ - Ժիրայր**
» ԲԵՐԱ — Համալ-Պաշի, թիւ 74, » »

Կը վաճառուի նաեւ Պոլսոյ գրավաճառներուն մօտ